

Զեկույց

(նախնական)

ՀՀ դատավորների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով
2014 և 2015 թթ. անցկացված որակավորման ստուգման քննությունների
մասին



«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

Երևան, 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....4

1. Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման հիմքում ընկած ներպետական օրենսդրությունը.....5

1.1. Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգումը.....5

1.2. Հավակնորդներին ներկայացվող պահանջները.....5

1.3. Որակավորման քննության թափանցիկության ապահովումը.....6

1.4. Որակավորման գրավոր քննությունը.....6

1.5. Որակավորման գրավոր քննության արդյունքների ամփոփումը և դրանց բողոքարկման կարգը.....8

1.6. Որակավորման ստուգման հարցազրույցի փուլը.....10

1.7. Դատավորների թեկնածությունների ցուցակի կազմումը և հաստատումը.....11

2. 2014թ. նոյեմբերի 1-ին քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված գրավոր քննությունը.....12

2.1. Գրավոր քննության մասնակիցների թիվը.....12

2.2. Գրավոր քննության ընթացքում արձանագրված խախտումները և այլ խնդիրներ.....13

2.3. Գրավոր քննության արդյունքները.....13

2.4. Գրավոր քննության արդյունքների բողոքարկումը մասնակիցների կողմից.....14

2.5. Գրավոր քննության արդյունքում հարցազրույցի փուլ անցած հավակնորդները.....15

3. 2014թ. դեկտեմբերի 10-12-ը քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված հարցազրույցը.....16

3.1. Արդարադատության խորհրդի անդամները, շահերի հնարավոր բախում.....17

3.2. Դիտորդների իրավունքների սահմանափակումները.....17

3.3. Յուրաքանչյուր հավակնորդի հետ անկացվող հարցազրույցի տևողությունը.....18

3.4. Հավակնորդներին տրվող հարցերի բովանդակությունը18

3.5. Հարցերի անհամապատասխանությունը հարցազրույցի տվյալ փուլին.....19

3.6. Հավակնորդների կենսագրության համապատասխանությունը տվյալ մասնագիտացմամբ դատավորի պաշտոնին.....20

3.7. Հարցազրույցի հիման վրա կազմված դատավորների թեկնածությունների ցուցակները և դրանց հաստատումը.....20

4. 2015թ. հունվարի 26-ին քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված հարցազրույցը.....	21
5. 2015թ. ապրիլի 18-ին վարչական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված գրավոր քննությունը.....	22
5.1. Հավակնորդների թիվը.....	23
5.2. Գրավոր քննության արդյունքները.....	23
5.3. Գրավոր քննության արդյունքների բողոքարկումը մասնակիցների կողմից.....	24
5.4. Գրավոր քննության արդյունքում հարցազրույցի փուլ անցած հավակնորդները.....	24
5.5. Քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ի համալրման նպատակով 2014 և 2015 թթ. անցկացված գրավոր քննությունների արդյունքների համեմատական վերլուծություն.....	25
6. 2015թ. մայիսի 26-27-ը վարչական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված հարցազրույցը.	26
6.1. Յուրաքանչյուր հավակնորդի հետ անկացվող հարցազրույցի տևողությունը.....	26
6.2. Հավակնորդներին տրվող հարցերի բովանդակությունը	27
6.3. Հարցերի անհամապատասխանությունը հարցազրույցի տվյալ փուլին.....	27
6.4. Հավակնորդների կենսագրության համապատասխանությունը տվյալ մասնագիտացմամբ դատավորի պաշտոնին.....	28
6.5. Հարցազրույցի հիման վրա կազմված դատավորների թեկնածությունների ցուցակները և դրանց հաստատումը.	28
6.6. Արդյունքների ամփոփում.....	29
7. Դիտարկումների արդյունքում ԻԵՄ-ի իրավունքների խախտման առնչությամբ հարուցված դատական գործեր.....	30
8. Առաջարկություններ.....	40

Ներածություն

Համաձայն ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Սահմանադրական սույն դրույթի լույսի ներքո մեծ կարևորություն է ստանում դատավորների նշանակման գործընթացը: Դրան կատարմամբ հանրային վերահսկողություն ապահովելու և այդ գործընթացի թափանցիկության աստիճանը բարձրացնելու նպատակով՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ԻԵՄ) 2014թ. նոյեմբեր ամսից դիտարկում է դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով ՀՀ արդարադատության խորհրդի կողմից կազմակերպվող և անցկացվող որակավորման ստուգման մրցույթները: Առայսօր, մասնավորապես, դիտարկվել են ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 29.08.2014թ. թիվ 35Լ որոշման հիման վրա՝ դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը՝ **երեք**, քրեական մասնագիտացմամբ բաժինը՝ **տաս** թեկնածուներով համալրելու նպատակով 2014թ. նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման գրավոր քննությունը, դեկտեմբերի 10-12-ին և 2015թ. հունվարի 26-ին անցկացված հարցազրույցի փուլերը: Դիտարկվել է նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 16.02.2015թ. թիվ 08Լ որոշման հիման վրա՝ դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը՝ յոթ, վարչական մասնագիտացմամբ բաժինը՝ երկու թեկնածուներով արտահերթ համալրելու նպատակով 2015թ. ապրիլի 18-ին անցկացված որակավորման գրավոր քննությունը և մայիսի 26-27-ին անցկացված հարցազրույցի փուլը:

Դիտարկման համար հիմք է հանդիսացել ՀՀ դատական օրենսգրքի 115.1-րդ հոդվածի 6-րդ մասը, ըստ որի՝ որակավորման գրավոր քննությանը և հարցազրույցին (բացառությամբ խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման) ներկայարարող են լինել և դրանց ընթացքին հետևել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի 1 ներկայացուցիչ, արդարադատության նախարարի նշանակած 1 ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նշանակած մինչև 3 փաստաբան և որակավորման ստուգման անցկացումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Արդարադատության խորհուրդ համապատասխան հայտ ներկայացրած՝ իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև հինգ ներկայացուցիչ՝ ըստ դիմումների ներկայացման առաջնահերթության:

Դիտարկված մրցույթների հիման վրա պատրաստվել է սույն նախնական զեկույցը: ՀՀ արդարադատության խորհրդի և Արդարադատության ակադեմիայի դեմ նախաձեռնած դատական գործընթացների ավարտից հետո ԻԵՄ-ը հանդես կգա ամփոփ զեկույցով, որում կներառի նաև համապատասխան օրենսդրության և մրցույթների կազմակերպման ընթացակարգի բարելավման հնարավորինս հստակ առաջարկություններ:

1. *Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման հիմքում ընկած ներպետական օրենսդրությունը*

Դատավորների նշանակման գործընթացին, նրանց թեկնածությունների ցուցակի համալրման կարգին վերաբերող ներպետական օրենսդրությունը ներառում է ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ դատական օրենսգիրքը և ՀՀ արդարադատության խորհրդի մի շարք որոշումներ:

Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետի (2005թ. խմբագրությամբ) համաձայն՝ «հանրապետության նախագահը, արդարադատության խորհրդի առաջարկությամբ, նշանակում է վճռաբեկ ... վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին»:

ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը ..., որոնց հիման վրա կատարվում են նշանակումները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ Արդարադատության խորհուրդը եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ: ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ գլուխը վերաբերում է դատավորների նշանակման կարգին:

1.1. *Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգումը.*

ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների նախագահների խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը հաշվարկում է հաջորդ երկու տարվա ընթացքում առաջին ատյանի դատարանում դատավորների թափուր պաշտոնների համալրման համար անհրաժեշտ թիվը և դրա հիման վրա որոշում կայացնում դատավորների թեկնածությունների ցուցակի համապատասխան մասնագիտացմամբ բաժնի համալրման անհրաժեշտության մասին, եթե դատավորների թեկնածությունների ցուցակում առկա թեկնածուների թիվը համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ բաժնում չի գերազանցում հաջորդ երկու տարում թափուր պաշտոնների կանխատեսվող թիվը 4-ով, իսկ վարչական մասնագիտացմամբ բաժնում՝ 2-ով: Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման համար անհրաժեշտ թեկնածուների թվի հաշվարկը կատարվում է հաջորդ երկու տարվա ընթացքում քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ բաժիններում համալրման համար անհրաժեշտ թիվը 2 թեկնածուով, իսկ վարչական մասնագիտացմամբ բաժնում՝ 1 թեկնածուով գերազանցող թվի հաշվարկով:

1.2. Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգումը կատարվում է մրցութային կարգով՝ գրավոր քննության արդյունքներով: Դրան կարող են մասնակցել 28-ից 60 տարեկան ՀՀ այն քաղաքացիները, որոնք Հայաստանի Հանրապետությունում ստացել են բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության

որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով, տիրապետում են հայերենին, օրենքով սահմանված կարգով գրկված չեն Դատական դպրոց դիմելու իրավունքից, ունեն առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ, և որոնք համապատասխանում են ՀՀ դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջներին:

1.3. Որակավորման քննության թափանցիկության ապահովումը.

ՀՀ դատական օրենսգրքի 115.1-րդ հոդվածի համաձայն՝ որակավորման քննությունն անցկացվում է հայերենով: Արդարադատության խորհրդի աշխատակազմն ապահովում է որակավորման գրավոր քննության ողջ ընթացքի ուղիղ հեռարձակումը քննասենյակից դուրս գտնվող տարածքում: Գրավոր քննության, ինչպես նաև Արդարադատության խորհրդում հարցազրույցի ողջ ընթացքը, բացառությամբ Խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման, տեսաձայնագրվում է Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից:

Օրենսգրքի վերոնշյալ հոդվածը, սակայն, նախատեսում է որակավորման ստուգման գրավոր քննության և հարցազրույցի փուլերի վերաբերյալ որոշակի կոնկրետ տեղեկատվություն ստանալու իրավունք ունեցողների սահմանափակ շրջանակ՝ այդպիսով լրջորեն խախտելով թափանցիկության սկզբունքը: Մասնավորապես՝ ՀՀ դատական օրենսգրքի 115.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հավակնորդն իրավունք ունի ստանալու գրավոր քննության ողջ ընթացքի, Արդարադատության խորհրդում հարցազրույցի՝ իրեն վերաբերող մասի տեսաձայնագրության կրկնօրինակը, ինչպես նաև որակավորման ստուգման գրավոր քննության ստուգված ցանկացած աշխատանքի պատճենները՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՀՀ վճարեկ դատարանի նախագահը և արդարադատության նախարարը կարող են ցանկացած ժամանակ դիմել և եռօրյա ժամկետում ստանալ գրավոր քննության ընթացքի, Արդարադատության խորհրդում հարցազրույցի տեսաձայնագրության կրկնօրինակը կամ գրավոր քննության ստուգված աշխատանքների պատճենները: Այսպիսով՝ օրենսգիրքը հստակ սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց համար հասանելի է որակավորման ստուգման ընթացքի վերաբերյալ այնպիսի կարևոր տեղեկատվություն, ինչպիսին է, օրինակ՝ հավակնորդների ստուգված աշխատանքների պատճենները և գրավոր քննության ու հարցազրույցի փուլերի տեսաձայնագրությունները: Արդյունքում՝ հանրությունը գրկվում է դատական իշխանության պոտենցիալ ներկայացուցչի, արդարադատություն իրականացնողի ընտրության և նշանակման կարևորագույն գործընթացի նկատմամբ ամբողջական վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից:

1.4. Որակավորման գրավոր քննությունը.

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի՝ որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական կամ վարչական մասնագիտացման ոլորտում թեստերի միջոցով, որոնք պարունակում են իրավական

խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով: Իրավական խնդիրներում կայացված յուրաքանչյուր հանգամանք վերհանելու, վերլուծելու և իրավական որակում տալու համար տրվում է համապատասխան միավոր՝ կախված հանգամանքների բարդությունից: Թեստի անցկացման նպատակը բացի հավակնորդի ակադեմիական գիտելիքների ստուգումից, նաև վերջինիս վերլուծական կարողությունների, բարդ տեքստերի համակարգված, արագ ըմբռնման կարողությունների ստուգումն է:

Նույն հոդվածի 6-8-րդ մասերի համաձայն՝ թեստի ժամանակ հարցերն ընտրվում են պատահականության սկզբունքով: Թեստի անցկացման համար նախատեսված հարցերի ընդհանուր քանակը, որից կատարվում է հարցերի ընտրությունը, պետք է առնվազն կրկնակի գերազանցի մեկ թեստի համար նախատեսված հարցերի քանակը:

Արդարադատության խորհուրդը սահմանում է սույն հոդվածով նախատեսված թեստի անցկացման համար մշակման ենթակա տարբերակների նվազագույն քանակը:

Որակավորման գրավոր քննության օրվանից առնվազն 10 օր առաջ Արդարադատության խորհրդի աշխատակազմը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է սույն հոդվածով նախատեսված որակավորման գրավոր քննության առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ:

Համաձայն 2014թ. Արդարադատության խորհրդի ԱԽ-18-Ո-14 որոշման 3-րդ կետի թեստերը պետք է կազմվեն առնվազն երեք տարբերակներով: Այս կարգավորմամբ ստացվում է, որ նվազագույն հարցերի քանակը չորսն է, որոնք կարող են տարբեր երկուական համադրություններով ներառվել երեք տարբերակների մեջ:

Համաձայն 2014թ. Արդարադատության խորհրդի ԱԽ-18-Ո-14 որոշման 42-րդ կետի՝ «Գրավոր քննության ընդհանուր արդյունքներով նվազագույն անցողիկ միավոր է համարվում դատավորների թեկնածությունների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման համար անհրաժեշտ թեկնածուների թվաքանակը 50 տոկոսով, բայց ոչ պակաս, քան 5-ով գերազանցող թվաքանակի ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդներից վերջինի՝ բայց ոչ պակաս, քան 40 միավորը: Հավասար նվազագույն անցողիկ միավոր ունեցող հավակնորդների առկայության դեպքում բոլոր այդ հավակնորդներն ընդգրկվում են ցուցակում»:

Որակավորման գրավոր քննության արդյունքներով անցողիկ միավորներ հավաքած հավակնորդներն անցնում են հոգեբանական թեստ՝ ուղղված պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը:

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասի՝ հոգեբանական թեստի արդյունքներն ունեն միայն խորհրդատվական նշանակություն, ենթակա չեն հրապարակման և տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին՝ խորհրդում հարցազրույցի անցկացումից հետո մինչև ամփոփիչ քննարկումը: Հոգեբանական թեստի արդյունքները դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա են ոչնչացման: Մույն դրույթը նույնպես զրկում է հանրությանը դատավորի բարդ և պատասխանատու պաշտոնն զբաղեցնելուն հավակնող անձի հոգեբանական վիճակին, առողջությանը ծանոթանալու հնարավորությունից

այդպիսով խախտելով թափանցիկության սկզբունքը: Ավելին, հոգեբանական թեստերի հետագա ոչնչացումը ընդհանրապես բացառում է նման հնարավորությունը:

1.5. Որակավորման գրավոր քննության արդյունքների ամփոփումը և դրանց բողոքարկման կարգը

Որակավորման ստուգման գրավոր քննության աշխատանքների ստուգման և գնահատման նպատակով ձևավորվում է համապատասխան գնահատման հանձնաժողով, իսկ քննության արդյունքների բողոքարկման հետ կապված հարցեր լուծելու նպատակով՝ բողոքարկման հանձնաժողով: Գնահատման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում հինգ դատավոր և իրավունքի համապատասխան բնագավառի երկու իրավաբան գիտնական: Բողոքարկման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում երկու դատավոր և իրավունքի համապատասխան բնագավառի մեկ իրավաբան գիտնական:

Գնահատման և բողոքարկման հանձնաժողովների կազմում ընդգրկվելու համար որակավորման գրավոր քննության համապատասխան փուլի անցկացումից ոչ շուտ, քան չորս օր առաջ Դատարանների նախագահների խորհուրդն առաջարկում է 10 դատավորի թեկնածություն՝ վերջիններիս համաձայնությամբ, իսկ արդարադատության նախարարն՝ իրավունքի համապատասխան բնագավառի առնվազն չորս իրավաբան գիտնականի թեկնածություն՝ վերջիններիս համաձայնությամբ: Որակավորման գրավոր քննության անցկացման օրը՝ քննության ավարտից անմիջապես հետո, նշված դատավորներից և իրավաբան գիտնականներից վիճակահանությամբ ընտրվում են գնահատման հանձնաժողովի անդամներ: Նույն անձը չի կարող միաժամանակ լինել և բողոքարկման և գնահատման հանձնաժողովի անդամ:

Գնահատման և բողոքարկման հանձնաժողովների աշխատանքն իրականացվում է գաղտնի և դռնփակ ընթացակարգով: Գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամների անունները ենթակա չեն հրապարակման համապատասխանաբար մինչև քննության կամ բողոքարկման արդյունքների հրապարակումը:

Գնահատման և բողոքարկման հանձնաժողովների կազմում չեն կարող ընդգրկվել Արդարադատության խորհրդի անդամները և դատարանների նախագահները:

Գնահատման և բողոքարկման հանձնաժողովների անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են համապատասխանաբար իր թեկնածությունն առաջադրած Դատարանների նախագահների խորհրդի կամ արդարադատության նախարարի կողմից՝

1) դատավորի պաշտոնում իր լիազորությունները դադարելու դեպքում.

2) եթե որակավորման ստուգմանը մասնակցում է իր ամուսինը կամ իր հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը.

3) եթե համապատասխանաբար Դատարանների նախագահների խորհուրդը կամ արդարադատության նախարարը, քննարկելով գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամի կողմից ներկայացված փաստերը կամ հանգամանքները, կարծում է, որ դրանք կարող են ողջամիտ կասկած հարուցել որակավորման ստուգմանը վերջինիս մասնակցության անկողմնակալության մեջ:

Ընդ որում՝ գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամը պարտավոր է անհապաղ գրավոր ձևով հայտնել Դատարանների նախագահների խորհրդին կամ արդարադատության նախարարին այնպիսի փաստերի և հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել որակավորման ստուգմանը վերջինիս մասնակցության անկողմնակալության հարցում:

Որակավորման ստուգման գրավոր քննության աշխատանքների ստուգումն իրականացնում են գնահատման հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված երկու ստուգողներ, որոնցից մեկը պետք է լինի դատավոր, իսկ մյուսը՝ իրավաբան գիտնական: Գնահատման հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ծանոթանալու ստուգված գրավոր աշխատանքին և ներկայացնելու իր նկատառումները:

ՀՀ դատական օրենսգրքի 115.3-րդ հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ որակավորման գրավոր քննության աշխատանքների ստուգման արդյունքներով վերջնական գնահատականը որոշում է գնահատման հանձնաժողովը՝ առնվազն 4 ձայնով ընդունված որոշմամբ: Համաձայն նույն հոդվածի 20-րդ մասի՝ եթե գնահատման հանձնաժողովն անհրաժեշտ ձայներով որոշում չի կայացնում վերջնական գնահատականի վերաբերյալ, ապա այն որոշվում է համապատասխանաբար երկու, իսկ լրացուցիչ ստուգում նշանակված լինելու դեպքում՝ չորս ստուգողների նշանակած գնահատականների միջինով:

ՀՀ դատական օրենսգրքի վերոնշյալ դրույթներից հետևում է, որ չնայած որակավորման ստուգման գրավոր աշխատանքներն ստուգվում են գնահատման հանձնաժողովի միայն երկու անդամի կողմից, վերջնական գնահատականը որոշվում է ամբողջ հանձնաժողովի քվեարկության արդյունքում, և անդամներից ընդամենը չորսի կողմ ձայնը բավարար է աշխատանքի վերջնական գնահատականը որոշելու համար: Ընդ որում՝ օրենսգիրքը չի սահմանում գնահատման հանձնաժողովի անդամների համար ստուգված գրավոր աշխատանքներին ծանոթանալու ուղղակի պարտավորություն, այլ ընդամենը նշում է, որ գնահատման հանձնաժողովի անդամն իրավունք ունի ծանոթանալու դրանց և ներկայացնելու նկատառումներ: Այսպիսով՝ օրենսդրությունը թույլ է տալիս գնահատման հանձնաժողովի անդամներին առանց ծանոթանալու ստուգված գրավոր աշխատանքներին՝ մասնակցել դրանց վերաբերյալ քվեարկությանը և որոշել հավակնորդի կողմից գրված աշխատանքի վերջնական գնահատականը: Ընդ որում՝ հանձնաժողովի կողմից անհրաժեշտ ձայներով որոշում չկայացվելու դեպքում, հավակնորդի գրավոր աշխատանքի գնահատականը հաշվարկվում է հանձնաժողովի այդ աշխատանքի ստուգումն իրականացրած երկու անդամների գնահատականների միջինով, ինչը կարող է լրջորեն կասկածի տակ դնել վերջնական գնահատականի օբյեկտիվության աստիճանը և իր հերթին կարող է պարունակել նաև կոռուպցիոն ռիսկեր: Հաշվի առնելով, որ դատական իշխանությունը ժողովրդավարական և իրավական պետության ամենաէական բաղադրիչներից է, անհասկանալի է նման թեթևամիտ վերաբերմունքը այդ իշխանության ձևավորման գործընթացի նկատմամբ, քանզի որակավորման մրցույթի հիմնական իմաստը հնարավորինս օբյեկտիվ ստուգման միջոցով ամենաարժանի թեկնածուներին ընտրելն է, և հենց այդ նպատակով ձևավորված մարմինների ամբողջ ռեսուրսը պետք է ներդրվի այդ գործին, իսկ այն, որ յոթ մասնագետի կողմից իրականացված ստուգումն ավելի բարձր օբյեկտիվության և հեղինակության ցուցանիշ ունի, քան երկուսի կողմից իրականացվածը ակսիոմատիկ ճշմարտություն է (հաշվի առնելով որ յոթ հոգու կողմից կեղծիքի կամ ուղղակի մարդկային սխալի հնարավորությունն ավելի է նվազում): Ուստի կարծում ենք, որ հիշյալ կարգավորումը պետք է վերանայվի և սահմանվի բոլոր անդամների համար պարտականություն ստուգելու և գնահատելու հավակնորդների աշխատանքները:

Յուրաքանչյուր հավակնորդ գնահատման հանձնաժողովի որոշման հրապարակման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող է դիմել բողոքարկման հանձնաժողով, եթե համարում է, որ խախտվել է քննության անցկացման ընթացակարգը, կամ վիճարկում է քննության գնահատականը: Քննության ընթացակարգը կամ

գնահատականը բողոքարկելիս հավակնորդը հստակ նշում է բողոքի հիմքում ընկած հանգամանքները և իր հիմնավորումները: Գրավոր քննության արդյունքների հրապարակումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Դատարանների նախագահների խորհրդի և արդարադատության նախարարի առաջարկած թեկնածուներից վիճակահանությամբ ընտրվում է 2 դատավոր և 1 իրավաբան գիտնական անդամներից կազմված բողոքարկման հանձնաժողով:

Բողոքարկման հանձնաժողովը բողոքները քննում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պատճառաբանվում են:

1.6. Որակավորման ստուգման հարցազրույցի փուլը.

ՀՀ Դատական օրենսգիրք 116-րդ հոդվածի համաձայն՝ որակավորման գրավոր քննության հանրագումարային արդյունքներով դատավորների թեկնածությունների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման համար անհրաժեշտ թեկնածուների թվաքանակը 50 տոկոսով, բայց ոչ պակաս, քան 5-ով գերազանցող թվաքանակի (բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան թվաքանակի հավակնորդ չի հավաքել անհրաժեշտ միավորները) ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդների ցուցակը ներկայացվում է Արդարադատության խորհուրդ՝ հարցազրույց անցնելու նպատակով: Հավասար անցողիկ միավոր ունեցող հավակնորդների առկայության դեպքում բոլոր այդ հավակնորդներն ընդգրկվում են ցուցակում :

Արդարադատության խորհրդում հարցազրույցի նպատակը դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ որակների և արժանիքների վերհանումն է՝ հավակնորդի մասնագիտական փորձառության, դատավոր դառնալու մոտիվացիայի, դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածության, նրա անձնական հատկանիշների (մասնավորապես՝ ինքնատիրապետում, վարվեցողություն, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և այլն) գնահատման միջոցով:

Արդարադատության խորհրդում հարցազրույցը կազմված է երեք մասից:

Հարցազրույցի **առաջին փուլում** ուսումնասիրվում է հավակնորդի անձնական գործը և անցած մասնագիտական ուղին, որը ներկայացնելու համար Արդարադատության խորհրդի անդամներից մեկը խորհրդում հանդես է գալիս որպես զեկուցող: Հավակնորդն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր անձնական գործում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ: Խորհրդի անդամները կարող են հարցեր տալ հավակնորդին՝ նրա մասնագիտական փորձառությունը, գիտական հետաքրքրությունները, դատավորի պաշտոնում նրա ակնկալիքները և մոտիվացիան, դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ անձնական որակները և արժանիքները գնահատելու համար:

Հարցազրույցի **երկրորդ փուլում** հավակնորդին տրվում է դատավորի վարքագծի կանոնների վերաբերող հիպոթետիկ խնդիր, որի վերաբերյալ վերջինս իրականացնում է վերլուծություն և ներկայացնում իր դիրքորոշումը, ինչը թույլ է տալիս գնահատել դատավորի վարքագծի հիմնարար կանոնների, դատավորին ներկայացվող պահանջների իմացությունը և որպես դատավոր գործելու համար կարևոր այլ անձնական հատկանիշների առկայությունը:

Հարցազրույցի **երրորդ փուլում** հավակնորդը վերլուծում է համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարց (օրենքի կամ այլ իրավական ակտի, այդ թվում՝ հիպոթետիկ իրավական նորմ, դատական ակտում արտահայտված դիրքորոշում, տեսության մեջ արտահայտված իրավական կարծիքներ և այլն) և ներկայացնում իր դիրքորոշումը: Այս փուլի նպատակն է գնահատել հավակնորդի՝ կարճ ժամանակահատվածում հանպատաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ որակները և արժանիքները: Ընդ որում՝ հավակնորդին տրվող հարցերը չպետք է ունենան նրա նեղ մասնագիտական իրավաբանական գիտելիքներն ստուգելու նպատակ:

Վերոնշյալ երեք փուլերում նախատեսված հարցերի շուրջ հավակնորդի բանավոր ելույթը յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կարող է տևել առավելագույնը 10 րոպե: Հավակնորդի ելույթին հետևում է Արդարադատության խորհրդի անդամների հետ քննարկումը՝ յուրաքանչյուր հարցի շուրջ ոչ ավելի, քան քսան րոպե տևողությամբ:

Սա նշանակում է, որ յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցը կարող է տևել ոչ ավելի, քան մեկուկես ժամ:

Հարցազրույցի ժամանակ Արդարադատության խորհրդի անդամներին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են Արդարադատության խորհրդի որոշմամբ սահմանված գնահատման ենթակա այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են և կարևոր դատավոր դառնալու համար: Խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ գնահատում է յուրաքանչյուր հավակնորդի՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: Բոլոր հավակնորդների հարցազրույցների ավարտից հետո Արդարադատության խորհրդի անդամների միջև տեղի է ունենում հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկում:

1.7. Դատավորների թեկնածությունների ցուցակի կազմումը և հաստատումը

Արդարադատության խորհրդում հարցազրույցի և արդյունքների վերաբերյալ ամփոփիչ քննարկման ավարտից հետո յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ անցկացվում է բաց քվեարկություն, որի ժամանակ Արդարադատության խորհրդի յուրաքանչյուր անդամ «կողմ» կամ «դեմ» է քվեարկում յուրաքանչյուր հավակնորդի: Քվեարկության արդյունքներով կազմվում է թեկնածությունների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի թափուր տեղերի թվաքանակին հավասար թվաքանակի առավելագույն ձայներ ստացած թեկնածությունների ցուցակ: Ձայների հավասարության դեպքում նախապատվություն է տրվում այն հավակնորդին, որը որակավորման գրավոր քննության արդյունքներով ունի առավել բարձր հանրագումարային միավորներ: Եթե արդյունքում առկա են հավասար միավորներ ունեցող անձինք, ապա բոլոր նշված անձինք ընդգրկվում են ցուցակում:

Ցուցակը կազմելու ընթացքում հաշվի է առնվում սեռային (գենդերային) հավասարակշռությունը: Եթե որևէ սեռի դատավորների թիվը պակասի դատավորների ընդհանուր թվի քսանհինգ տոկոսից, ապա այդ սեռի թեկնածուներին ցուցակում կերաշխավորվի առնվազն հինգ տեղ:

Քվեարկության արդյունքների ամփոփումից հետո հարցազրույցին մասնակցած յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ խորհուրդը կազմում է զեկույց, որում խորհրդի անդամների կողմից լրացված հարցաթերթերի, ամփոփիչ քննարկման ժամանակ

արտահայտված կարծիքների և Արդարադատության խորհրդի անդամների կողմից ներկայացված հատուկ կարծիքների հիման վրա՝ ընտրված հավակնորդների պարագայում մանրամասն ներկայացվում են այն հանգամանքները, որոնք պայմանավորել են հավակնորդի ընտրությունը, իսկ հարցազրույցի արդյունքում չընտրված հավակնորդների մասով՝ ներկայացվում են նրանց ընտրությունը մերժելու պատճառները:

Արդարադատության խորհուրդը դատավորների թեկնածությունների ցուցակը ներկայացնում է Հանրապետության Նախագահի հաստատմանը: Ցուցակի հետ Հանրապետության Նախագահին են ուղարկվում հարցազրույցին մասնակցած բոլոր հավակնորդների անձնական գործերը և նրանց վերաբերյալ կազմված զեկույցները՝ Արդարադատության խորհրդի անդամների ներկայացրած հատուկ կարծիքների հետ: Հանրապետության Նախագահը ցուցակն ստանալու օրվանից հետո, տասնօրյա ժամկետում հաստատում է Արդարադատության խորհրդի կազմած ցուցակը կամ այն վերադարձնում է Արդարադատության խորհուրդ՝ պահանջելով նոր քննարկում: Արդարադատության խորհուրդը Հանրապետության Նախագահի վերադարձրած թեկնածությունների ցուցակը ստանալու օրվան հաջորդող տասնհինգօրյա ժամկետում Հանրապետության Նախագահին է ուղարկում փոփոխված ցուցակ կամ կարող է Հանրապետության Նախագահին ներկայացնել անփոփոխ ցուցակ, եթե դրա օգտին է քվեարկում խորհրդի անդամների երկու երրորդը: Հանրապետության Նախագահի կողմից թեկնածությունների ցուցակը վերադարձվելու դեպքում Արդարադատության խորհուրդն իրավունք ունի ըստ անհրաժեշտության կրկին հրավիրելու և լսելու խորհրդում արդեն իսկ հարցազրույցի ներկայացած հավակնորդներին:

2. 2014թ. նոյեմբերի 1-ին քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված գրավոր քննությունը.

2014թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ արդարադատության խորհուրդը, հիմք ընդունելով ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 29.08.2014թ. №35L որոշումը, www.court.am կայքում հրապարակեց հայտարարություն՝ դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը՝ երեք, քրեական մասնագիտացմամբ բաժինը՝ տասը թեկնածուներով համալրելու նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին¹: Այդ իսկ օրը ԻԵՄ-ը դիմեց ՀՀ արդարադատության խորհուրդ՝ խնդրելով հնարավորություն ընձեռել իր դիտորդներին դիտարկելու կայանալիք որակավորման ստուգման գրավոր քննությունը: Ստանալով Արդարադատության խորհրդի բանավոր համաձայնությունը՝ ԻԵՄ-ը հինգ դիտորդի կազմով մասնակցեց 2014թ. նոյեմբերի 1-ին դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով կազմակերպված որակավորման ստուգման գրավոր քննությանը:

2.1. Գրավոր քննության մասնակիցների թիվը.

2014թ. նոյեմբերի 1-ին դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով կազմակերպված որակավորման ստուգման գրավոր քննությանը մասնակցել է ընդհանուր առմամբ 50 հավակնորդ, որից 20-ը դիմել է դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով, իսկ 30-ը՝ քրեական:

¹ Տե՛ս՝ http://www.court.am/files/news/3053_am.pdf

2.2. Գրավոր քննության ընթացքում արձանագրված խախտումները և այլ խնդիրներ.

Գրավոր քննությունից առաջ Արդարադատության խորհրդի ներկայացուցիչը ողջունեց հավակնորդներին և շնորհակալություն հայտնեց այն ժամանակ Արդարադատության ակադեմիայի նորանշանակ ռեկտոր Ռուբեն Մելիքյանին այն բանի համար, որ վերջինս իր վրա է վերցրել և պատրաստել գրավոր քննության թեստերի համար անհրաժեշտ հարցերը:

Քննական տարբերակների ընտրության ժամանակ ԻԵՄ-ի ներկայացուցիչը պարզել է, որ նոյեմբերի 1-ին որակավորման ստուգման քննության համար վիճակահանությամբ ընտրված քննական տարբերակները (քաղաքացիական մասնագիտացմամբ՝ տարբերակ թիվ 3, քրեական մասնագիտացմամբ՝ տարբերակ թիվ 2) համընկնում են Արդարադատության խորհրդի կայքում նախապես հրապարակված², համապատասխանաբար, գրավոր քննության առաջադրանքների քաղաքացիական և քրեական մասնագիտացման նմուշօրինակների հետ: Ավելին, այդ մասին դիտորդներին խոսակցության ժամանակ հայտնել է նաև քննությանը ներկա Արդարադատության խորհրդի աշխատակազմից մի պաշտոնյա (անունը չի հրապարակվում), ում խոսքերով 01.11.2014թ. քննական տարբերակներից մեկը, համաձայն դատական օրենսգրքի պահանջի, հրապարակվել է www.court.am կայքում, որը հանդիսանում է դատական դեպարտամենտի պաշտոնական կայքը: Դիտորդին, սակայն, հնարավորություն չի ընձեռվել լուսանկարելու քննական այդ տարբերակները: Արդարադատության խորհրդի ներկայացուցիչը վստահեցրել է, որ համապատասխան հարցում ներկայացնելու պարագայում քննական տարբերակները կտրամադրվեն գրավոր փուլից հետո: Հետագայում ԻԵՄ-ին համապատասխան բովանդակությամբ հարցմամբ պահանջված տեղեկատվության տրամադրումը մերժվել է:

Իսկ Ռուբեն Մելիքյանի հետ զրույցի ժամանակ պարզվել է, որ նա, հաշվի առնելով Դատական օրենսգրքի պահանջները, կազմել է հենց չորս հարց (քանի որ դրանից պակաս հարցերի դեպքում կարձանագրվեր օրենքի խախտում), որոնք և տարբեր համադրություններով ներառվել են երեք տարբերակներում, ինչի արդյունքում մեկ տարբերակի երկու հարցերից ամեն մեկը ներառված էր նաև մյուս տարբերակում:

2.3. Գրավոր քննության արդյունքները.

2014թ. նոյեմբերի 6-ին ՀՀ արդարադատության խորհրդի կայքում (www.court.am) հրապարակվել է նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր քննության նախնական արդյունքները: Դրանց համաձայն՝ դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով որակավորման քննության 20 մասնակիցներից միայն 11-ն է հաղթահարել 50 միավորի շեմը: Բոլոր հավակնորդները գրել են գրավոր քննության համար կազմված թեստի երկու խնդիրներն էլ,

² Տե՛ս՝ http://www.court.am/?l=lo&id=11&item_id=3123

որոնք հանձնաժողովի կողմից գնահատվել են առանձին-առանձին: Յուրաքանչյուր հավակնորդի վերջնական միավորը ձևավորվել է երկու խնդիրների գնահատականների հանրագումարի արդյունքում: Հավակնորդների կողմից վերլուծված առանձին խնդիրների գնահատականներն ուսումնասիրելիս՝ պարզ է դառնում, որ գրեթե բոլոր հավակնորդների մոտ առանձին խնդիրների համար ստացված գնահատականները էականորեն տարբերվում են իրարից³: Հավակնորդների մեծամասնությունը մի խնդրից հավաքել է էապես ավելի բարձր միավոր քան մյուսից: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հավակնորդների մեծամասնությունը քննական դահլիճը լքել է նախքան քննության համար սահմանված ժամանակի ավարտը, հետևաբար խնդիրներից մեկի համար քիչ միավորներ հավաքելու պատճառ առնվազն հավակնորդների կեսից ավելիի համար չի կարող հանդիսանալ ժամանակի սղությունը: Համադրելով այս փաստերը, մենք գալիս ենք այն հետևության, որ հավակնորդները հիմնականում բարձր միավորներ են ստացել այն խնդիրներից, որոնք ընդգրկված են եղել գրավոր քննությունից 10 օր առաջ հրապարակված այսպես կոչված նմուշօրինակ տարբերակում, որը փաստորեն իսկապես բովանդակել է այն խնդիրները, որոնք ընդգրկված են եղել 01.11.2014թ. գրավոր քննության տարբերակներում: Ուշագրավ է նաև այն փաստը, որ հետագայում տարբեր հնարքների կիրառման միջոցով ԻԵՄ-ին այդպես էլ չտրամադրվեցին գրավոր քննության տարբերակները (այս հարցին առավել մանրամասն անդրադարձը ստորև):

Նախնական արդյունքների համաձայն՝ քաղաքացիական մասնագիտացմամբ ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած առաջին 8 հավակնորդներն անցել են հարցազրույցի փուլ: Այսպիսով՝ հարցազրույցի փուլ անցած ամենացածր միավորն ունեցող հավակնորդի հանրագումարային գնահատականը եղել է 61.5, իսկ ամենաբարձր գնահատականը՝ 79.5:

Դատավորների թեկնածությունների ցուցակի քրեական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով որակավորման քննության 30 մասնակիցներից միայն 8-ն է ստացել 50 հանրագումարային միավորից ավելի: Այս դեպքում երկու խնդիրների առանձին գնահատականները համեմատաբար շատ չեն տարբերվել: 30 գրավոր աշխատանքից միայն 7-ի դեպքում են առանձին խնդիրների գնահատականները շեշտակիորեն տարբերվել իրարից, 3-ի դեպքում՝ երկրորդ խնդիրը գնահատվել է 0 միավոր: Նախնական արդյունքների համաձայն՝ քրեական մասնագիտացմամբ ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած առաջին 16 հավակնորդները անցել են հարցազրույցի փուլ: Հարցազրույցի փուլ անցած 16 հավակնորդից ամենացածր հանրագումարային միավորը եղել է 40.5, ամենաբարձրը՝ 88: Բոլոր հավակնորդների միջին հանրագումարային միավորն է 53,3:

³ Տե՛ս՝ http://www.court.am/upload/file/Cucak%20-%202014%20qax_%20gnahatakanner.pdf

2.4. Գրավոր քննության արդյունքների բողոքարկումը մասնակիցների կողմից.

Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր քննության արդյունքները քննության 50 մասնակցից 11-ը բողոքարկել է: Դատավորների ցուցակը քաղաքացիական մասնագիտացմամբ համալրելու նպատակով դիմած 6 հավակնորդի կողմից ներկայացվել է բողոք և արդյունքների վերանայման պահանջ: Քրեական մասնագիտացմամբ հավակնորդներից նման պահանջով են հանդես եկել 5-ը: Քաղաքացիական մասնագիտացմամբ 6 հավակնորդների ներկայացված բողոքներից միայն 2-ն են բավարարվել, ինչի արդյունքում երկու հավակնորդների ստացած հանրագումարային միավորները բարձրացվել են 0.5- ական միավորով: Քրեական մասնագիտացմամբ 5 հավակնորդների կողմից ներկայացված բողոքներից 3-ը բավարարվել են: Ընդ որում 3-ից 2-ի դեպքում հավակնորդի նախնական և վերջնական հանրագումարային միավորների տարբերությունը բավականին մեծ է: Մի դեպքում նախնական միավորը եղել է 31.5, իսկ վերստուգելուց հետո բարձրացել է 6 միավորով՝ դառնալով՝ 37.5: Մյուս դեպքում՝ հավակնորդի նախնական գնահատականը եղել է 17.5, իսկ բողոքարկումից հետո բարձրացվել է 14.5 միավորով՝ դառնալով՝ 32:

2.5. Գրավոր քննության արդյունքում հարցազրույցի փուլ անցած հավակնորդները

Բողոքարկման փուլի ավարտից հետո ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմը 2014թ. նոյեմբերի 24-ին ԱԽ պաշտոնական կայքում հրապարակել է դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր քննության վերջնական արդյունքները^{4 5}: Այդ արդյունքներից պարզ է դառնում, որ չնայած հավակնորդների նախաձեռնությամբ իրականացված բողոքարկման գործընթացի արդյունքում մի շարք հավակնորդների գնահատականները փոխվել են (որոշ դեպքերում՝ բավականին զգալի կերպով), այդ փոփոխությունները չեն անդրադարձել հարցազրույցի փուլ անցած հավակնորդների ցուցակի վրա: Այն մնացել է անփոփոխ: Այսպիսով՝ հարցազրույցի փուլ են անցել նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր փուլի արդյունքում քաղաքացիական մասնագիտացմամբ ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած առաջին 8 հավակնորդները, և քրեական մասնագիտացմամբ ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած առաջին 16 հավակնորդները:

Աղյուսակ 1. Դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժինը համալրելու նպատակով անցկացվելիք որակավորման ստուգման բանավոր փուլ անցած հավակնորդների ցուցակը

⁴ Տես՝ http://www.court.am/?l=lo&id=11&item_id=3185

⁵ Տես՝ http://www.court.am/?l=lo&id=11&item_id=3184

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Հանրագումարային միավոր
1.	Օհանյան Արման Վարդանի	79,5
2.	Ջալալյան Հասմիկ Ռաֆիկի	79
3.	Հովհաննիսյան Լենդրուշ Հրաչյայի	77
4.	Ափոյան Իլյա Մաշայի	69,5
5.	Ասլանյան Արմեն Վլադիմիրի	65
6.	Արզումանյան Աննա Սեյրանի	64,5
7.	Աբովյան Սիմա Լևոնի	63
8.	Սուչյան Արտաշես Աշոտի	61,5

Աղյուսակ 2. Դատավորների թեկնածությունների ցուցակի քրեական մասնագիտացման բաժինը համալրելու նպատակով անցկացվելիք որակավորման ստուգման բանավոր փուլ անցած հավակնորդների ցուցակը

N	Անուն, ազգանուն, հայրանուն	Հանրագումարային միավոր
1.	Դանիբեկյան Աննա Արտեմի	88
2.	Մաթևոսյան Աննա Գևորգի	77,5
3.	Սարգսյան Արմեն Վանիկի	72,5
4.	Սարգսյան Տիգրան Աշոտի	62
5.	Ավագյան Լուսինե Աբովի	59,5
6.	Սարգսյան Արսեն Հեկտորի	53,5
7.	Սարգսյան Գեղամ Մերուժանի	51,5
8.	Հովհաննիսյան Գրիգոր Վոլոդյայի	50
9.	Սարգսյան Վաչե Վանիկի	49,5
10.	Գզոռյան Սուսաննա Վասիլի	48,5
11.	Սարգսյան Դավիթ Վալերիի	48
12.	Մարդանյան Կարեն Հենրիկի	45,5
13.	Մալխասյան Գարիկ Աշոտի	45,5
14.	Նիկողոսյան Արսեն Սերժիկի	44
15.	Գաբրիելյան Գրիգոր Յուրիկի	42
16.	Հարությունյան Էվա Մարտունի	42

3. 2014թ. դեկտեմբերի 10-12-ը քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված հարցազրույցը

Որակավորման ստուգման գրավոր քննության վերջնական արդյունքները հրապարակելուց հետո 2014թ. նոյեմբերի 28-ին Արդարադատության խորհրդի աշխատակազմը ԱԽ պաշտոնական կայքով տարածել է հայտարարություն, որով տեղեկացրել է, որ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով

Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդում հարցազրույցը տեղի է ունենալու 2014 թվականի դեկտեմբերի 10-12 ընկած ժամանակահատվածում: ԻԵՄ-ը 5 դիտորդի կազմով դիտարկել է որակավորման ստուգման հարցազրույցի փուլն ամբողջությամբ: Դիտարկման արդյունքում վեր են հանվել մի շարք ընթացակարգային և կազմակերպչական, ինչպես նաև օրենսդրական խնդիրներ:

3.1. Արդարադատության խորհրդի անդամները. շահերի հնարավոր բախում.

Ղատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման բանավոր փուլը՝ հարցազրույցը, վարում է ՀՀ արդարադատության խորհուրդը: Այն ունի հետևյալ կազմը. 9 ղատավոր և 4 իրավաբան գիտնական (13 անդամ): 9 ղատավորներն, ըստ ՀՀ Սահմանադրության, ընտրվում են ՀՀ ղատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով. ընդ որում, յուրաքանչյուր աստիճանի դատարանից ընտրվում է երեքական ղատավոր: Իրավաբան գիտնականներից 2-ին նշանակում է ՀՀ ազգային ժողովը, իսկ մյուս 2-ին՝ Հանրապետության նախագահը:

Նախ՝ պետք է արձանագրել այն հանգամանքը, որ ղատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով դիմում ներկայացրած անձանց՝ հավակնորդների գերակշիռ մեծամասնությունը երկար տարիներ աշխատում են (աշխատել են) դատական համակարգում որպես ղատավորի օգնական, դատական նիստերի քարտուղար կամ այլ դատական ծառայող, փոքր մասը՝ գործադիր իշխանության մարմիններում, և հաշվի առնելով այդ հանգամանքը, կարելի է արձանագրել, որ առկա է շահերի բախման վտանգ: Քանի որ հարցազրույցի վարման և ղատավորների թեկնածությունների ցուցակի կազմման համար պատասխանատու Արդարադատության խորհրդի կազմի գերակշիռ մեծամասնությունը ղատավորներ են, ինչպիսի հանգամանքն էլ կարող է կասկածի տակ դնել մրցութային գործընթացի օբյեկտիվությունը:

3.2. Դիտորդների իրավունքների սահմանափակումները.

2014թ դեկտեմբերի 10-ին, ղատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման բանավոր փուլի՝ հարցազրույցի առաջին օրը ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմի ղեկավարի կողմից փորձ է արվել խոչընդոտել ԻԵՄ-ի կողմից իրականացվող դիտարկման ընթացքը: Մասնավորապես՝ աշխատակազմի ղեկավարն արգելել է ԻԵՄ-ի դիտորդներին ձայնագրառել մրցույթի ընթացքը: Նման արգելքը բացատրվել է նրանով, որ նման իրավունք վերապահված է միայն Արդարադատության խորհրդին: Արդարադատության խորհրդի աշխատակազմի ղեկավարը հղում է արել ՀՀ դատական օրենսգրքի 115.1 հոդվածի 3-րդ մասին, ըստ որի՝ Արդարադատության խորհրդում հարցազրույցի ողջ ընթացքը, բացառությամբ Խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման, **տեսաձայնագրվում է** Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը,

որ մրցույթի ընթացքն արձանագրելու իրավունքը միայն Արդարադատության խորհրդին վերապահված է միայն **տեսաձայնագրման** մասով, ինչպես նաև այն որ համապատասխան գործողության վերաբերյալ այլ անձանց համար արգելքի բացակայության պարագայում անձն ազատ է անելու այն ինչ արգելված չէ օրենքով՝ ԻԵՄ-ի դիտորդները չեն ենթարկվել խորհրդի աշխատակազմի ղեկավարի պահանջին և շարունակել են ձայնագրառել մրցույթի ընթացքը: Բանը հասել է նրան, որ աշխատակազմի ղեկավարը խլել է դիտորդների ձայնագրիչը և վերադարձրել այն միայն հարցազրույցի փուլի առաջին օրվա ավարտից հետո: Նշվածի վերաբերյալ կազմվել է արձանագրություն:

3.3. Յուրաքանչյուր հավակնորդի հետ անցկացվող հարցազրույցի տևողությունը.

ՀՀ դատական օրենսգրքի 116.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցը կարող է տևել ոչ ավելի, քան մեկուկես ժամ: 2014թ. դեկեմբերի 10-12-ը անցկացված հարցազրույցին մասնակցել է ընդհանուր առմամբ 24 հավակնորդ, որից 16-ը՝ քրեական մասնագիտացմամբ, 8-ը՝ քաղաքացիական: Քննված 24 մասնակիցներից միայն մեկի հարցազրույցն է տևել համեմատաբար երկար՝ 40 րոպե: Մյուս հավակնորդների հարցազրույցը տևել է զգալիորեն ավելի կարճ: Մասնավորապես 4 հավակնորդի հարցազրույցը տևել է մոտ 10 րոպե, 3-ինը՝ մոտ 15 րոպե, 8-ինը՝ 20, 7-ինը՝ 25, և մեկ հավակնորդ քննվել է շուրջ 30 րոպե:

3.4. Հավակնորդներին տրվող հարցերի բովանդակությունը .

Արդարադատության խորհրդում հարցազրույցը կազմված է երեք փուլից.

- 1) Առաջին փուլում ուսումնասիրվում է հավակնորդի անձնական գործը և մասնագիտական փորձառությունը: Այս փուլի նպատակն է նաև պարզել հավակնորդի գիտական հետաքրքրությունները, դատավոր դառնալու դրդապատճառը, դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ անձնական որակների և արժանիքների առկայությունը:
- 2) Երկրորդ փուլում հավակնորդին տրվում է դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդիր: Այս փուլում գնահատվում է հավակնորդի՝ դատավորի վարքագծի հիմնարար կանոնների իմացությունը, դատավորին ներկայացվող պահանջների առկայությունը:
- 3) Երրորդ փուլում հավակնորդին տրվում է համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարց: Այս փուլում գնահատվում է հավակնորդի վերլուծական ունակությունները և դիրքորոշումը իրավական հարցի վերաբերյալ, ինչպես նաև՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ որակները և արժանիքները: Թեկնածուին տրվող հարցերը չպետք է ունենան նրա նեղ մասնագիտական իրավաբանական գիտելիքները ստուգելու նպատակ:

2014թ. դեկտեմբերի 10-12-ը անցկացված հարցազրույցի փուլի դիտարկման ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ հավակնորդի անձնական գործի և փորձառության ուսումնասիրության ժամանակ Արդարադատության խորհրդի անդամները, դուրս գալով իրենց իրավասությունների և առհասարակ հարցազրույցի շրջանակից, հավակնորդներին տվել են խիստ անձնական, երբեմն նաև՝ վիրավորական բնույթի հարցեր: Մասնավորապես, հավակնորդներից մեկին տրվել է հարց՝ արդյոք նա հավատում է Աստծուն կամ «ի՞նչ է աստված Ձեր համար»: Մեկ այլ հավակնորդի տրվել են հարցեր վերջինիս ծնողների վերաբերյալ. «ծնողներ ունե՞ք, քանի՞ տարեկան են, թոշակառու՞ են» և այլն: Հատկապես վիրավորական վերաբերմունք է ցուցաբերվում իգական սեռի հավակնորդների նկատմամբ: Նախ՝ ճշտվում էր արդյոք այս կամ այն հավակնորդը ամուսնացած է թե ոչ, երեխաներ ունի թե ոչ: Ամուսնացած կանանց, մասնավորապես, հարցնում են՝ արդյոք նրանց ամուսինը թույլ է տալիս աշխատել որպես դատավոր, կամ արդյոք ամուսինը տեղյակ է, որ կինը դիմել է դատավորի պաշտոնում աշխատելու համար, տրվում էին նաև հետևյալ բովանդակությամբ հարցեր. «... բա երեխեքիդ ի՞նչ ես անելու, ո՞վ ա պահելու» և այլն: Չամուսնացած կանանցից փորձ էր արվում պարզել՝ եթե ամուսնանան, ու ամուսինը չթողնի աշխատել, ի՞նչ կանի, մեջբերում. «սեր ա, բան ա»: Կին հավակնորդին, որն ի պատասխան մարզում դատավորի պաշտոնի անցնելու հարցին, նշում է, որ կգնա համապատասխան մարզ աշխատելու և իր հետ կտանի ծնողներին, որոնք տարիքով մեծ են, ԱԽ անդամը հարցնում է՝ «ավելի լավ չի ամուսնանա ու ամուսնու հետ գնա, քան ծնողների»: Ակնհայտ էր բացասական վերաբերմունքը ամուսնալուծված մեկ հավակնորդի նկատմամբ, որն, ի դեպ, առանձնանում էր արժանապատիվ կեցվածքով, հեղինակության համաչափ դրսևորման ունակությամբ և խորհրդին հաճոյանալու հոգեբանական լծից զերծ պահվածքով:

Ինչ վերաբերում է հարցազրույցի երրորդ փուլին, որն, ըստ օրենքով նախատեսված դրույթների, չպետք է ունենա հավակնորդի նեղ մասնագիտական իրավաբանական գիտելիքներն ստուգելու նպատակ, ապա իրականում գրեթե բոլոր հավակնորդներին տրվել են նեղ մասնագիտական հարցեր: Օրինակ՝ քրեական մասնագիտացմամբ որոշ հավակնորդների տրվել են հարցեր նոր Քրեական օրենսգրքի նախագծում ներառված դրույթների վերաբերյալ: Հավակնորդներից մեկին տրվել են հարցեր նույնիսկ Վճռաբեկ դատարանի՝ ռեցիդիվի և արագացված դատաքննության վերաբերյալ վերջին որոշման մասին: Քաղաքացիական մասնագիտացմամբ հավակնորդներին, օրինակ, տրվել էին հարցեր քաղաքացիաիրավական կոնկրետ պայմանագրի առանձնահատկությունների մասին և այլն: Վերոնշյալ հարցերն ակնհայտորեն չէին համապատասխանում ՀՀ դատական օրենսգրքի 116.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի նպատակներին դրանք ունակ էին բացահայտելու կամ տվյալ խնդրի իմացություն կամ չիմացություն և չէին կարող բացահայտել հավակնորդի կարճ ժամանակահատվածում հանպատաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ որակները և արժանիքները գնահատելու համար:

3.5. Հարցերի անհամապատասխանությունը հարցազրույցի տվյալ փուլին.

ԱԽ անդամները հաճախ խախտել են հարցազրույցի կոնկրետ փուլի ընթացքում հավակնորդին տրվող հարցերին ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ վերջին՝ իրավական գիտելիքների ստուգման փուլում, հավակնորդներին տրվում են անձնական

բնույթի հարցեր, կամ հարցեր նրա մոտիվացիայի և այլնի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, հատկապես ԱԽ որոշ անդամների կողմից նկատվում էր անտարբեր և թեթևամիտ վերաբերմունք գործընթացի վերաբերյալ, իսկ ոմանք բավական հարձակողական բնույթի հարց ու պատասխանի մեջ էին մտնում հավակնորդների հետ փորձելով հաստատել վերջիններիս չիմացությունը այս կամ այն հարցի վերաբերյալ: Կարելի է ասել, որ գործընթացը պրոֆեսիոնալ բավական ցածր մակարդակ ուներ և ԱԽ անդամների մեծ մասի մոտ առկա էր հավակնորդների նկատմամբ առավելության դրսևորման անթաքույց ցանկություն: Իհարկե հասկանալի է շատ դեպքերում տարիքային տարբերությունը, բայց դա բնավ բավարար պատճառ չէ նման բարձր մարմնում, նման կարևորության հարցի շրջանակներում նման մոտեցումների կամ վարքագծի դրսևորման:

3.6. Հավակնորդների կենսագրության համապատասխանությունը տվյալ մասնագիտացմամբ դատավորի պաշտոնին.

Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման հարցազրույցի փուլ անցած 24 հավակնորդների կենսագրությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ նրանցից 6-ի աշխատանքային փորձառությունը չի համապատասխանում կոնկրետ մասնագիտացմամբ դատավորի պաշտոնին: Այսպես՝ թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժինը համալրելու համար դիմած 8 հավակնորդից 1-ն աշխատել է ՀՀ դատախազությունում: Քրեական մասնագիտացման բաժինը համալրել հավակնող անձանցից 5-ը նույնպես իրենց աշխատանքային փորձառությամբ չեն համապատասխանում քրեական մասնագիտացմամբ դատավորի աշխատանքին: Օրինակ՝ հավակնորդներից մեկն իր ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում աշխատել է հարկային մարմիններում, ինչպես նաև՝ դասավանդել ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում և ընդամենը մի քանի ամիս աշխատել է դատախազությունում՝ որպես դատախազ: Մեկ այլ հավակնորդ իր ամբողջ աշխատանքային գործունեությունը ծավալել է քաղաքացիական իրավունքի ուղղվածությամբ: Մյուսը՝ քաղաքացիական ուղղվածությամբ փաստաբան է և երկար տարիներ դասավանդում է քաղաքացիական իրավունք: Չորրորդը ֆինանսական իրավունքի փորձառություն ունի և միայն 13 օր աշխատել է որպես դատախազ: Հինգերորդը՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար է եղել երկար տարիներ:

Վերոգրյալի նպատակը որևէ օրենքի պահանջի խախտում ընդգծելը չէ դրա բացակայության պատճառով, այլ այս հանգամանքի վրա ուշադրություն ենք դարձնում երևույթի նկատմամբ նաև ԱԽ որոշ անդամների դրսևորած հետաքրքրության պատճառով:

3.7. Հարցազրույցի հիման վրա կազմված դատավորների թեկնածությունների ցուցակները և դրանց հաստատումը.

2014թ. դեկտեմբերի 10-12-ը դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված հարցազրույցի արդյունքների հիման վրա Արդարադատության խորհուրդը կազմել է դատավորների թեկնածությունների ցուցակը և ներկայացրել այն ՀՀ նապագահի հաստատմանը: Ըստ այդ ցուցակի՝ համապատասխան մասնագիտացման բաժնի թափուր տեղերի թվաքանակին հավասար թվաքանակի առավելագույն ձայներ ստացած հավակնորդներն են.

Քաղաքացիական մասնագիտացում.

1. Օհանյան Արման Վարդանի
2. Արզումանյան Աննա Սեյրանի
3. Հովհաննիսյան Լենդրուշ Հրաչյայի

Քրեական մասնագիտացում.

1. Դանիբեկյան Աննա Արտեմի
2. Մաթևոսյան Աննա Գևորգի
3. Մարդարյան Արսեն Հեկտորի
4. Մարգարյան Գեղամ Մերուժանի
5. Հովհաննիսյան Գրիգոր Վուրդյայի
6. Մարգարյան Վաչե Վանիկի
7. Գզոդյան Սուսաննա Վասիլի
8. Մարգարյան Դավիթ Վալերիի
9. Մարդանյան Կարեն Հենրիկի
10. Նիկողոսյան Արսեն Սերժիկի

Արդարադատության խորհրդի երկու իրավաբան գիտնականները հատուկ կարծիք են ներկայացրել վերոնշյալ ցուցակի՝ քաղաքացիական մասնագիտացմամբ բաժնի վերաբերյալ: Նրանք, մասնավորապես, գրել են, որ քաղաքացիական մասնագիտացմամբ, առանց բացառության բոլոր հավակնորդները, հարցազրույցի ընթացքում չեն ցուցաբերել անհրաժեշտ պատրաստվածություն, ինչը դժվարացրել է արժանի թեկնածուների ընտրությունը: Ըստ իրավաբանների՝ հավակնորդներից և ոչ մեկն իր գիտելիքներով և վերլուծական ունակություններով օբյեկտիվորեն չի համապատասխանում ներկայացվող պահանջներին: Նրանք նաև նշել են, որ նախագահի հաստատմանը ներկայացվող ցուցակում պետք է ընդգրկվեր հավակնորդ Հասմիկ Ջալալյանը, որն ըստ իրենց՝ գիտելիքներով և անձնական այլ հատկանիշներով գերազանցում էր մնացած բոլոր հավակնորդներին:

2015 թ. հունվարի 12-ին ՀՀ նախագահը հրամանագիր է ստորագրում ⁶, որով հաստատում է ներկայացված դատավորների թեկնածությունների ցուցակը՝ քրեական մասնագիտացման

⁶ Տե՛ս՝ <http://www.president.am/hy/decrees/item/1633/>

բաժնի մասով, իսկ քաղաքացիական բաժնի մասով ցուցակն ուղարկվում է ԱԽ նոր քննարկման:

4.2015թ. հունվարի 26-ին քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված հարցազրույցը.

ՀՀ Նախագահի 2015թ. հունվարի 12 -ի ՆՀ- 1 -Ա հրամանագրի ⁷ հիման վրա՝ Արդարադատության խորհրդը որոշում է կայացրել դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժնի համալրման նպատակով նոր հարցազրույց կազմակերպել 2015թ. հունվարի 26-ին, որին մասնակցելու էին հրավիրվել 2014թ. նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր փուլը քաղաքացիական մասնագիտացման մասով հաղթահարած հավակնորդները: Հարցազրույցին ներկայացել էին 8 հավակնորդներից 7-ը միայն: Ընդհանուր առմամբ հունվարի 26-ի հարցազրույցն անցավ 2014թ. դեկտեմբերի 12-ի հարցազրույցի նույնանման մթնոլորտում: Մասնավորապես՝ հավակնորդներին տրվում էին նեղ մասնագիտական հարցեր, ինչպես նաև խիստ անձնական բնույթի հարցեր:

Հարցազրույցի արդյունքում Արդարադատության խորհուրդը հայտարարություն տարածեց, ըստ որի՝ արդյունքների վերաբերյալ ամփոփիչ քննարկման ավարտից հետո կայացված քվեարկության արդյունքներով դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի թափուր տեղերի թվաքանակին հավասար թվաքանակի առավելագույն ձայներ ստացած հավակնորդներն են.

1. Հովհաննիսյան Լենդրուշ Հրաչյայի
2. Արզումանյան Աննա Սեյրանի
3. Օհանյան Արման Վարդանի

Փաստորեն արդարադատության խորհուրդը որոշում է կայացրել ՀՀ նախագահի հաստատմանը ներկայացնել լրիվ նույն ցուցակը, որն արդեն իսկ վերադարձվել էր նախագահի կողմից նոր քննարկում պահանջելով: Այս անգամ արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական հանդիսացող անդամները հատուկ կարծիք չեն ներկայացրել: Այդուհանդերձ, 2015թ. փետրվարի 6-ի ՆՀ-203-Ա հրամանով ⁸ ՀՀ նախագահը հրամանագիր է ստորագրել, ըստ որի՝ կարգադրել է «Դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման մասին» թիվ ԱԽ-2-Ո-5 որոշմամբ ներկայացված դատավորների թեկնածությունների ցուցակը վերադարձնել Արդարադատության խորհուրդ՝ նկատի ունենալով, որ հիշյալ որոշմամբ խախտվել է ՀՀ նախագահի կողմից վերադարձված ցուցակը ՀՀ նախագահին վերստին ներկայացնելու՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով սահմանված կարգը:

⁷ Տե՛ս՝ <http://www.president.am/hy/decrees/item/1633/>

⁸ Տե՛ս՝ <http://www.president.am/hy/decrees/item/1827/>

Վերոգրյալն ուշագրավ է այնքանով, որ մի ամբողջ Արդարադատության Խորհուրդ փաստորեն ձախողում է Դատական օրենսգրքով սահմանված կարգը, ինչը միայն հաստատում է 3.5. կետում արտահայտված կարծիքը: Փաստն այն է, որ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածը սահմանում է. «Արդարադատության խորհուրդը Հանրապետության Նախագահի վերադարձրած թեկնածությունների ցուցակը ստանալու օրվան հաջորդող տասնհինգօրյա ժամկետում Հանրապետության Նախագահին է ուղարկում փոփոխված ցուցակ կամ կարող է Հանրապետության Նախագահին ներկայացնել անփոփոխ ցուցակ, եթե դրա օգտին է քվեարկում խորհրդի անդամների **երկու երրորդը**»: Հաշվի առնելով հիշյալ կարգավորումը հարց է առաջանում թե ինչու է ԱԽ-ն. գիտակցելով, որ ապահովված չեն ԱԽ երկու երրորդով ցուցակը հաստատելու օրենքի պահանջները, կրկին ներկայացնում ՀՀ Նախագահի հաստատմանը: Եթե բացառենք այն հանգամանքը, որ միգուցե ԱԽ-ի ուշադրությունից վրիպել է այդ պահանջը, մնում է ենթադրել, որ այդ մարմինը հույս է ունեցել, որ ՀՀ Նախագահի աշխատակազմը չի նկատի այդ կարգավորումը:

5. 2015թ. ապրիլի 18-ին վարչական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված գրավոր քննությունը.

Հիմք ընդունելով ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 16.02.2015թ. № 08L որոշումը՝ Արդարադատության խորհուրդը 2015թ. փետրվարի 19-ին հայտարարել է դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական և վարչական մասնագիտացմամբ բաժինները համապատասխանաբար յոթ և երկու թեկնածուներով արտահերթ համալրելու նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին: Գրեթե երկու ամիս անց, ապրիլի 18-ին դատավորների թեկնածությունների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անց է կացվել որակավորման ստուգման գրավոր քննություն:

5.1. Հավակնորդների թիվը.

2015թ. ապրիլի 18-ին դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով կազմակերպված որակավորման ստուգման գրավոր քննությանը մասնակցել է ընդհանուր առմամբ 47 հավակնորդ, որից 37-ը դիմել է դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով, իսկ 10-ը՝ վարչական:

5.2. Գրավոր քննության արդյունքները

2015թ. ապրիլի 20-ին ՀՀ արդարադատության խորհրդի կայքում (www.court.am) հրապարակվել են ապրիլի 18-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր քննության

նախնական արդյունքները⁹: Դրանց համաձայն՝ դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով որակավորման քննության 37 մասնակիցներից 23-ը հաղթահարել է 50 միավորի շեմը: Բոլոր հավակնորդները, բացի երկուսից, գրել են գրավոր քննության համար կազմված թեստի երկու խնդիրներն էլ, որոնք հանձնաժողովի կողմից գնահատվել են առանձին-առանձին: Յուրաքանչյուր հավակնորդի վերջնական միավորը ձևավորվել է երկու խնդիրների գնահատականների հանրագումարի արդյունքում: Հավակնորդների կողմից գրված առանձին խնդիրների գնահատականներն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ 5 հավակնորդի՝ առանձին խնդիրների համար ստացված գնահատականներն ավելի քան կրկնակի անգամ տարբերվում են իրարից: Նախնական արդյունքների համաձայն՝ քաղաքացիական մասնագիտացմամբ ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած առաջին 12 հավակնորդներն անցել են հարցազրույցի փուլ: Այսպիսով՝ հարցազրույցի փուլ անցած ամենացածր միավորն ունեցող հավակնորդի հանրագումարային գնահատականը եղել է 70 (12-րդ տեղ)՝ ի տարբերություն 2014թ. նոյեմբերի 1-ի քննության 61.5 արդյունքի, որն ստացողն, ի դեպ, զբաղեցնում էր 8-րդ տեղը, իսկ ամենաբարձր գնահատականն է 93-ը՝ ի տարբերություն նախորդ մրցույթի 1-ին տեղը զբաղեցրած հավակնորդի 79.5 միավորի:

Դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով որակավորման քննության 10 մասնակիցներից 9-ը ստացել է 50 հանրագումարային միավորից ավելի: 10 գրավոր աշխատանքից միայն 3-ի դեպքում են առանձին խնդիրների գնահատականները շեշտակիորեն տարբերվել իրարից, ոչ մի խնդրի լուծում չի գնահատվել 0 միավոր: Նախնական արդյունքների համաձայն՝ քրեական մասնագիտացմամբ ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած առաջին 7 հավակնորդներն անցել են հարցազրույցի փուլ: Հարցազրույցի փուլ անցած 7 հավակնորդից ամենացածր հանրագումարային միավորը եղել է 67, ամենաբարձրը՝ 94:

5.3. Գրավոր քննության արդյունքների բողոքարկումը մասնակիցների կողմից.

Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով 2015թ. ապրիլի 18-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր քննության արդյունքները քննության 47 մասնակցից 7-ը բողոքարկել է: Դատավորների ցուցակը քաղաքացիական մասնագիտացմամբ համալրելու նպատակով դիմած 6 հավակնորդի կողմից ներկայացվել է բողոք և արդյունքների վերանայման պահանջ: Վարչական մասնագիտացմամբ հավակնորդներից նման պահանջով է հանդես եկել միայն 1-ը: Քաղաքացիական մասնագիտացմամբ 6 հավակնորդների ներկայացրած բողոքներից միայն 3-ն են բավարարվել, ինչի արդյունքում հավակնորդներից մեկի ստացած հանրագումարային միավորը բարձրացվել է 1 միավորով՝ 64-ից դառնալով 65, երկրորդինը՝ բարձրացվել է 2 միավորով՝ 46-ից դառնալով 48, իսկ երրորդինը՝ 5 միավորով՝ 55-ից դառնալով 60: Վարչական

⁹ Տե՛ս՝ http://www.court.am/?l=lo&id=11&item_id=3438

մասնագիտացմամբ հավակնորդներից միայն մեկն է բողոքարկել քննության արդյունքները: Նրա բողոքը բավարարվել է, գնահատականը բարձրացվել է մեկ միավորով՝ 66-ից դառնալով 67: Բարձրացված մեկ միավորը օգնել է հավակնորդին հարցազրույցի փուլ անցնել:

5.4. Գրավոր քննության արդյունքում հարցազրույցի փուլ անցած հավակնորդները.

Բողոքարկման փուլի ավարտից հետո ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմը 2015թ. մայիսի 5-ին ԱԽ պաշտոնական կայքում հրապարակել է դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով ապրիլի 18-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր քննության վերջնական արդյունքները: Այդ արդյունքներից պարզ է դառնում, որ չնայած հավակնորդների նախաձեռնությամբ իրականացված բողոքարկման գործընթացի արդյունքում մի շարք հավակնորդների գնահատականները փոխվել են, այդ փոփոխությունների արդյունքում բողոքարկողներից միայն մեկն է անցել հարցազրույցի փուլ: Այսպիսով՝ հարցազրույցի փուլ են անցել ապրիլի 18-ին անցկացված որակավորման ստուգման գրավոր փուլի արդյունքում քաղաքացիական մասնագիտացմամբ ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած առաջին 12 հավակնորդները և վարչական մասնագիտացմամբ ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած առաջին 8 հավակնորդները:

Աղյուսակ 1. Դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժինը համալրելու նպատակով անցկացվելիք որակավորման ստուգման բանավոր փուլ անցած հավակնորդների ցուցակը

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Հանրագումարային միավոր
1.	Վարդանյան Գրիգորի Հարությունի	93
2.	Գրիգորյան Տիգրան Սիմոնի	91
3.	Ներսիսյան Լիանա Վլադիկի	84
4.	Ավագյան Լուսինե Աբոյի	82
5.	Իսկանդարյան Սիմա Ալբերտի	82
6.	Բաղմանյան Իվան Զավենի	81
7.	Հովհաննիսյան Լենդրուշ Հրաչյայի	81
8.	Արզումանյան Աննա Սեյրանի	80
9.	Ջալալյան Հասմիկ Ռաֆիկի	77
10.	Աղաքարյան Հայկ Վահանի	73
11.	Օհանյան Արման Վարդանի	72
12.	Մխիթարյան Նաիրա Միշայի	70

Աղյուսակ 2. Դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացման բաժինը համալրելու նպատակով անցկացվելիք որակավորման ստուգման բանավոր փուլ անցած հավակնորդների ցուցակը

N	Անուն, ազգանուն, հայրանուն	Հանրագումարային միավոր
1.	Մանասյան Նարինե Միսակի	94
2.	Պետրոսյան Մուրեն Ամրահու	92
3.	Մախմուդյան Ռուստամ Ջամսի	88
4.	Թադևոսյան Վազգեն Գրիգորի	84
5.	Պետրոսյան Միլեր Ղարիբի	82
6.	Հախվերդյան Վահե Մայիսի	76
7.	Լևոնյան Կարեն Ալբերտի	67
8.	Ազրոյան Ռուզաննա Արայիկի	67

5.5. Քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ի համալրման նպատակով 2014 և 2015 թթ. անցկացված գրավոր քննությունների արդյունքների համեմատական վերլուծություն.

Վերլուծելով 2015 և 2014 թթ. անցկացված որակավորման ստուգման գրավոր քննության քաղաքացիական մասնագիտացմամբ բաժնի հավակնորդների արձանագրած արդյունքները՝ առավելագույնը, որ կարելի է անել, հանգելն է այն եզրակացության, որ ընդհանուր առմամբ 2015թ. ապրիլի 18-ի գրավոր քննության մասնակիցներն ստացել են ավելի բարձր միավորներ, քան 2014թ. հավակնորդները, ինչի արդյունքում 2014թ. հարցազրույցի փուլ անցած մի քանի հավակնորդ, ցույց տալով գրեթե միանման արդյունք, 2015թ. մրցույթի դեպքում գրավոր քննության փուլը չեն հաղթահարել: Այսպես՝ 2014թ. որակավորման ստուգման գրավոր փուլը հաղթահարած հավակնորդների միջին գնահատականը եղել է 69.9, 2015թ. հարցազրույցի փուլ անցած հավակնորդների միջին գնահատականը՝ 80.5: Երկու մրցույթներին էլ մասնակցած հավակնորդների արձանագրած արդյունքները ունեն հետևյալ դինամիկան:

Անուն, ազգանուն	2014թ. նոյեմբերի 1	2015թ. ապրիլի 18
Ավագյան Լուսինե Աբոյի	59.5	82
Հովհաննիսյան Լենդրուշ Հրաչյայի	77	81
Արզումանյան Աննա Մեյրանի	64.5	80
Ջալալյան Հասմիկ Ռաֆիկի	79	77
Օհանյան Արման Վարդանի	79.5	72
Աբովյան Սիմա Լևոնի	63	60
Սուչյան Արտաշես Աշոտի	61.5	50
Գրիգորյան Գոհար Գրիշայի	38.5	65

Սույն աղյուսակից առավելագույնը, որ պարզ է դառնում, այն է որ վերը ներկայացված հավակնորդներից 4-ը զգալիորեն բարելավել են իրենց ցուցանիշները, իսկ մյուս 4-ի մոտ նկատվում է անկում: Չնայած դրան, 2014թ. համեմատ ավելի ցածր միավորներ ստացած 4 հավակնորդներից 2-ն անցել են հարցազրույցի փուլ: Իսկ ավելի բարձր ցուցանիշ արձանագրած հավակնորդներից միայն 3-ն են հաղթահարել գրավոր փուլը:

6. 2015թ. մայիսի 26-27-ը վարչական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված հարցազրույցը.

Որակավորման ստուգման գրավոր քննության վերջնական արդյունքները հրապարակելուց հետո 2015թ. մայիսի 15-ին Արդարադատության խորհրդի աշխատակազմը ԱԽ պաշտոնական կայքով տարածել է հայտարարություն, որով տեղեկացվել է, որ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդում հարցազրույցը տեղի է ունենալու 2015 թվականի մայիսի 26-27-ն ընկած ժամանակահատվածում: ԻԵՄ-ը 5 դիտորդի կազմով դիտարկել է որակավորման ստուգման հարցազրույցի փուլն ամբողջությամբ: Դիտարկման արդյունքում վեր են հանվել մի շարք ընթացակարգային և կազմակերպչական, ինչպես նաև օրենսդրական խնդիրներ:

6.1. Յուրաքանչյուր հավակնորդի հետ անցկացվող հարցազրույցի տևողությունը.

ՀՀ դատական օրենսգրքի 116.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցը կարող է տևել ոչ ավելի, քան մեկուկես ժամ: 2015թ. մայիսի 26-27-ն անցկացված հարցազրույցին մասնակցել է ընդհանուր առմամբ 20 հավակնորդ, որից 8-ը վարչական մասնագիտացմամբ, 12-ը՝ քաղաքացիական: Քննված 20 մասնակիցներից միայն մեկի հարցազրույցն է տևել համեմատաբար երկար՝ 40 րոպե: Մյուս հավակնորդների հարցազրույցը տևել է զգալիորեն ավելի կարճ: Մասնավորապես 2 հավակնորդի հարցազրույցը տևել է մոտ 10 րոպե, 4-ինը՝ մոտ 15 րոպե, 7-ինը՝ 20, 4-ինը՝ 25, և երկու հավակնորդ քննվել է շուրջ 30 րոպե:

6.2. Հավակնորդներին տրվող հարցերի բովանդակությունը.

2015թ. մայիսի 26-27-ը անցկացված հարցազրույցի փուլի ընթացքում հավակնորդի անձնական գործի և փորձառության ուսումնասիրության ժամանակ Արդարադատության խորհրդի անդամներն ավելի կոռեկտ են գտնվել հավակնորդներին անձնական բնույթի հարցեր տալիս: Մասնավորապես՝ կին հավակնորդներին, ի տերբերություն 2014թ.ին հայտարարված մրցույթի, խորհրդի անդամները «Ամուսինը թողու՛մ ա դատավոր աշխատես» բնույթի հարցերի փոխարեն, տրվել են «Հեռավոր մարզերից մեկի դատարանում դատավորի

պաշտոն ստանձնելու դեպքում, ինչպե՞ս կլուծեք ընտանիքի տեղափոխման հարցերը» բնույթի հարցեր:

Անհեթեթ հարցեր, ինչևէ, կրկին հնչել են: Օրինակ՝ ԱԽ անդամներից մեկը հավակնորդներից մեկին, ով խոսում էր Գյումրու բարբառով, հարցրեց, թե ինչպես է աշխատելու Սյունիքում իր այդ բարբառով:

Ինչ վերաբերում է հարցազրույցի երրորդ փուլին, որի ընթացքում ստուգվում են հավակնորդի իրավական գիտելիքները, ապա այս դեպքում նույնպես գրեթե բոլոր հավակնորդներին տրվել են նեղ մասնագիտական հարցեր: Օրինակ՝ քաղաքացիական մասնագիտացմամբ հավակնորդներին տրվում են հարցեր քաղաքացիաիրավական կոնկրետ պայմանագրի առանձնահատկությունների մասին: Վարչական մասնագիտացմամբ հավակնորդներից երկուսին հարցրել են Վարչական դատավարության օրենսգրքի նոր նախագծի մանրամասների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել նույնն, ինչ նախորդ մրցույթի ժամանակ՝ այն տարբերությամբ, որ եթե հավակնորդները որոշակիորեն ավելի բարձր միավորներ էին հավաքել, քան նախորդ մրցույթի ընթացքում, ապա ԱԽ-ի անդամների մոտ էական փոփոխություն չկար: Հատկապես ԱԽ-ի որոշ անդամների կողմից նկատվում էր անտարբեր և թեթևամիտ վերաբերմունք գործընթացի վերաբերյալ, իսկ ոմանք բավական հարձակողական բնույթի հարց ու պատասխանի մեջ էին մտնում հավակնորդների հետ՝ փորձելով հաստատել վերջիններիս չիմացությունը այս կամ այն հարցի վերաբերյալ: Կարելի է ասել, որ գործընթացը պրոֆեսիոնալ բավական ցածր մակարդակ ուներ և ԱԽ անդամների մեծ մասի մոտ առկա էր հավակնորդների նկատմամբ առավելության դրսևորման անթաքույց ցանկություն: Իհարկե հասկանալի է շատ դեպքերում տարիքային տարբերությունը, բայց դա բնավ բավարար պատճառ չէ նման բարձր մարմնում, նման կարևորության հարցի շրջանակներում նման մոտեցումների կամ վարքագծի դրսևորման:

6.3. Հարցերի անհամապատասխանությունը հարցազրույցի տվյալ փուլին.

ԱԽ անդամները 2015թ. մրցույթի հարցազրույցի փուլում ևս հաճախ խախտել են հարցազրույցի կոնկրետ փուլի ընթացքում հավակնորդին տրվող հարցերին ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ վերջին՝ իրավական գիտելիքների ստուգման փուլում, հավակնորդներին տրվել են անձնական բնույթի հարցեր, կամ հարցեր նրա մոտիվացիայի և այլնի վերաբերյալ:

6.4. Հավակնորդների կենսագրության համապատասխանությունը տվյալ մասնագիտացմամբ դատավորի պաշտոնին.

Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման հարցազրույցի փուլ անցած 20 հավակնորդների կենսագրության ուսումնասիրությունից պարզվել է, որ նրանցից 2-ի աշխատանքային փորձառությունը չի համապատասխանում կոնկրետ մասնագիտացմամբ դատավորի պաշտոնին: Այսպես՝ թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժինը համալրելու համար դիմած 12 հավակնորդից 1-ի փորձառությունը քրեադատավարական ոլորտում է: 2015թ.

մրցույթին մասնակցելու և քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով, ի դեպ, դիմել է 2014թ. մրցույթի հավակնորդներից մեկը նաև, ով 2014թ. քրեական մասնագիտացմամբ բաժինն էր ցանկանում համալրել: Վերջինիս աշխատանքային փորձն ավելի շատ համապատասխանում է քաղաքացիական մասնագիտացմանը: Ինչևէ, ոչ առաջին, ոչ էլ երկրորդ մրցույթի արդյունքների համաձայն՝ տվյալ հավակնորդը դատավորների թեկնածությունների ցուցակում չի ընդգրկվել: Վարչական մասնագիտացման բաժինը համալրել հավակնող անձանցից 1-ը նույնպես իր աշխատանքային փորձառությամբ չի համապատասխանում վարչական մասնագիտացմամբ դատավորի աշխատանքին: Նրա հիմնական փորձառությունը եղել է քրեական ոլորտում, մինևույն ժամանակ դասավանդում է Սահմանադրական իրավունք առարկան:

6.5. Հարցազրույցի հիման վրա կազմված դատավորների թեկնածությունների ցուցակները և դրանց հաստատումը.

2015թ. մայիսի 25-26-ը դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված հարցազրույցի արդյունքների հիման վրա Արդարադատության խորհուրդը կազմել է դատավորների թեկնածությունների ցուցակը և ներկայացրել այն ՀՀ նախագահի հաստատմանը: Ըստ այդ ցուցակի՝ համապատասխան մասնագիտացման բաժնի թափուր տեղերի թվաքանակին հավասար թվաքանակի առավելագույն ձայներ ստացած հավակնորդներն են.

Քաղաքացիական մասնագիտացում.

1. Վարդանյան Գրիգորի Հարությունի
2. Հովհաննիսյան Լենդրուշ Հրաչյայի
3. Գրիգորյան Տիգրան Սիմոնի
4. Արզումանյան Աննա Մեյրանի
5. Մխիթարյան Նաիրա Միշայի
6. Իսկանդարյան Սիմա Ալբերտի
7. Օհանյան Արման Վարդան

Վարչական մասնագիտացում.

1. Մախմուդյան Ռուստամ Ջասմի
2. Պետրոսյան Մհեր Ղարիբի

Ինչպես տեսնում ենք, 2014թ. մրցույթի արդյունքում քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակը համալրած երեք թեկնածուները, որոնց թեկնածության հաստատումը երկու անգամ մերժվել էր ՀՀ նախագահի կողմից, նորից ընդգրկվել են ցուցակում:

Վարչական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակը համալրած երկու թեկնածուներից մեկը՝ Պետրոսյան Մհերը, որի կենսագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ աշխատել է նախ ՀՀ դատական դեպարտամենտում, ապա՝ Վճռաբեկ դատարանում, ակնհայտորեն վայելում էր ԱԽ նիստերը նախագահողի, Վճռաբեկ

դատարանի նախագահ Արամ Մկրտումյանի հովանավորությունը: Մասնավորապես, երբ հավակնորդին տրվում էին հարցեր, որոնց վերջինս դժվարանում էր պատասխանել՝ Արման Մկրտումյանը միջամտում էր: Օրինակ՝ ԱԽ անդամ պարոն Ղազինյանն անդրադարձավ հավակնորդի կողմից նախապես արված այն պնդմանը, որ ինքը վերջին 4 տարիների ընթացքում կազմել է ավելի քան 2000 դատական ակտի նախագիծ և գտնում է, որ արդեն ժամանակն է դատական ակտեր կազմելու: Ղազինյանը տարակուսանք հայտնեց պնդման առնչությամբ՝ ասելով, որ, փաստորեն, հավակնորդը միջին հաշվարկով մեկ աշխատանքային օրվա ընթացքում կազմել է 4-5 դատական ակտ: Պարոն Մկրտումյանը միջամտեց՝ ասելով, որ հավակնորդն աշխատում է քաղաքացիական և վարչական պալատում, որում տարեկան 2800 կա: Այնուհետև ԱԽ անդամ պարոն Բաբայանը հարց տվեց հավակնորդին վարչական դատավարության նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ՝ հուշելով, որ դատական դեպարտամենտը, ուր հավակնորդն աշխատում է վերջերս քննարկել է այդ հարցը և հրապարակել այդ մասին տեղեկատվություն կայքում: Տեսնելով, որ հավակնորդը չի կարողանում պատասխանել հարցին՝ պարոն Մկրտումյանը միջամտել է և հարցն ուղղող ԱԽ անդամին ասել, որ մի քանի հոդվածի մասին է խոսքը, ոչ թե նոր նախագծի: Նեղ մասնագիտական հարցերին (չնայած որ Դատական օրենսգրքն արգելում է նեղ մասնագիտական հարցեր տալ հավակնորդին) չէր կարողանում հստակ պատասխանել: Նրա հարցազրույցը տևել է 17 րոպե:

Ի տարբերություն վերջինիս՝ հավակնորդներից մյուսը, Ռուզաննա Ազրոյանը, որն, ի դեպ, չի ընդգրկվել ցուցակում, 40 րոպե քննվելու ամբողջ ընթացքում գրեթե բոլոր հարցերին, այդ թվում՝ նեղ մասնագիտական, տվել է հստակ պատասխաններ:

6.6. Արդյունքների ամփոփում

Երկու մրցույթների արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը: Առաջին մրցույթին մասնակցած 8 հավակնորդ, որոնք հաղթահարել են 50 բալի շեմը, չեն հաղթահարել հարցազրույցի փուլը, երկրորդ մրցույթի դեպքում նման հավակնորդների թիվը եղել է 11-ը: Ընդ որում. նշված 11 հավակնորդներն ստացել են միջինում 70 միավորից ավելի: Առաջին մրցույթի ժամանակ քաղաքացիական մասնագիտացմամբ գրավոր փուլը հաղթահարած 8 հավակնորդներից մրցույթում հաղթող են ճանաչվել 1-ին, 3-րդ և 6-րդ տեղը զբաղեցնողները: Քրեական մասնագիտացմամբ՝ գրավոր փուլը հաղթահարած 16 հավակնորդից 3-րդ, 4-րդ, 5-րդ, 13, 15, 16-րդ տեղերը զբաղեցնողները չեն հաղթահարել հարցազրույցի փուլը:

Երկրորդ մրցույթի ժամանակ վարչական մասնագիտացմամբ գրավոր փուլը հաղթահարած 8 հավակնորդներից մրցույթում հաղթող են ճանաչվել 3-րդ և 5-րդ տեղը զբաղեցնողները: Մյուսները չեն հաղթահարել հարցազրույցի փուլը: Իսկ քաղաքացիական մասնագիտացմամբ գրավոր փուլը հաղթահարած 12 հավակնորդից 3-րդ, 4-րդ, 6-րդ, 9-րդ ու 10-րդ տեղերը զբաղեցնողները չեն հաղթահարել հարցազրույցի փուլը:

7. Դիտարկումների արդյունքում ԻԵՄ-ի իրավունքների խախտման առնչությամբ հարուցված դատական գործեր.

2014 և 2015թթ. ՀՀ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված մրցույթների դիտարկման ընթացքում և արդյունքում ՀՀ արդարադատության խորհրդի, ինչպես նաև ՀՀ արդարադատության ակադեմիայի կողմից խախտվել է ԻԵՄ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքը: Այս երկու մարմինները խախտել են ՀՀ Սահմանադրության, Կոնվենցիայի, օրենսդրության, ինչպես նաև միջազգային այլ իրավական ակտերի մի շարք դրույթներ: Այս խախտումների հիման վրա, իր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ԻԵՄ-ը ներկայացրել է մի շարք հայցեր այս երկու մարմինների դեմ:

7.1. «Իրավունքի Եվրոպա միավորումն» ընդդեմ Արդարադատության ակադեմիայի. վարչական գործ թիվ ՎՂ/0787/05/15

2015թ. հունվարի 30-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ արդարադատության ակադեմիա պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ ՊՈԱԿ)՝ խնդրելով տրամադրել ՀՀ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2014 թ. -ի նոյեմբերի 1-ին ՀՀ արդարադատության խորհրդի կողմից անցկացված որակավորման ստուգման գրավոր փուլի քննական տարբերակները:

2015թ. փետրվարի 13-ին «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ից ստացվել է պատասխան, ըստ որի՝ հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել ԻԵՄ-ին: Ըստ Արդարադատության ակադեմիայի՝ որակավորման քննությունների ավարտից հետո համապատասխան խնդիրներն ընդգրկվել են Ակադեմիայի ուսուցողական և քննական նյութերի շտեմարանում և ամենայն հավանականությամբ՝ կօգտագործվեն Ակադեմիայի կրթական գործընթացում՝ որպես ուսումնական կամ քննական նյութ: Արդարադատության ակադեմիան ներկայացրել է պահանջվող տեղեկատվության տրամադրումը մերժելու հետևյալ իրավական հիմքերը.

- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է հեղինակային իրավունքը և/կամ հարակից իրավունքները:
- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1112 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝ գրական (գրական-գեղարվեստական, **ուսումնական**¹⁰, հրապարակախոսական և այլ) ստեղծագործությունները:

Մատնանշվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 332.4-րդ հոդվածով սահմանված արգելքը, որի համաձայն՝ քրեական պատասխանատվություն է սահմանվում դատավորների որակավորման քննության կամ մասնագիտական պատրաստման քննությունների հարցերի գաղտնիությունը խախտելու համար:

¹⁰ Ընդգծումը՝ Արդարադատության ակադեմիայի

2015թ. փետրվարի 13-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել Արդարադատության ակադեմիային տրամադրել նախապես հայցված տեղեկատվությունը: ԻԵՄ-ն անհիմն է համարել արդարադատության ակադեմիայի՝ տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերը: Դատարան ներկայացրած հայցում նշվել է, որ հկ-ների ներկայացուցիչների համար տեղեկությունների տրամադրման սահմանափակումներ չկան, քանի որ պահանջված՝ որակավորման ստուգման գրավոր փուլի քննական տարբերակները այն փաստի ուժով, որ դրանցով արդեն իսկ անցկացվել է դատավորների մրցույթը, որի համար դրանք պատրաստվել էին, դրանք արդեն իսկ հայտնի էին անորոշ թվով անձանց, որոնք հիշյալ տարբերակների գաղտնիության պահպանման որևէ պարտավորություն չունեն, ուստի դրանց գաղտնիությանը հղում կատարել և դիտորդներից գաղտնի պահելը չի հետապնդում իրավաչափ նպատակ և անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, ինչը նշանակում է, որ տեղեկատվության տրամադրման համար օրենքով նախատեսված սահմանափակումներ ևս չկան: Օրենքով սահմանված չէ որակավորման քննությունից հետո դրանց գաղտնիության պահպանման պահանջ: Ըստ ԻԵՄ-ի՝ պատասխանող արդարադատության ակադեմիան իրավունք չունի սահմանափակելու դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը, քանի որ պատասխանողի գործունեությունից են բխում հրապարակայնությունը և թափանցիկությունը, ինչը չի կարող իրականանալ տեղեկատվության տրամադրումը մերժելով: ԻԵՄ-ը նշել է, որ տեղեկատվության ազատությանը միջամտելու այս ակտը չի համապատասխանում ՄԻԵԴ-ի եռաստիճան թեստին, այսինքն՝ սահմանված չէ օրենքով, չի հետապնդում իրավաչափ նպատակ և անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում:

Չնայած ԻԵՄ-ի կողմից ներկայացված փաստարկներին, դատարանն իր 2015թ. հոկտեմբերի 26-ի վճռով մերժել է հայցը՝ նշելով, որ հայցվող տեղեկատվությունը պաշտոնական փաստաթուղթ չէ, ուստի և՛ տեղեկություն ևս չէ՝ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իմաստով: Դատարանը եզրակացրել է, որ հայցվող քննական տարբերակները չեն կարող պահանջվել տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքի համատեքստում՝ որպես այդ իրավունքի իրացման դրսևորում: Ըստ ԻԵՄ-ի ներկայացուցիչների՝ քննության տարբերակները պաշտոնական փաստաթուղթ են, քանի որ կազմված են հանրային իշխանության մարմնի՝ արդարադատության խորհրդի կողմից:

Նշելով, որ տեղեկություն ստանալու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 27-րդ, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասում, վարչական դատարանն արձանագրել է, որ տեղեկություններ ստանալու իրավունքը սկզբնապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բավականին նեղ մեկնաբանության է ենթարկվել: Մասնավորապես, Եվրոպական դատարանը չի ճանաչել վարչական տվյալների և փաստաթղթերի մատչելիության իրավունքը: Սկզբնապես ՄԻԵԴ դիրքորոշումը եղել է այն, որ «դժվար է Կոնվենցիայից բխեցնել վարչական տվյալների և փաստաթղթերի մատչելիության ընդհանուր իրավունքը...»:

Դատարանը վերլուծելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանությանն առնչվող պրակտիկայի վերջին զարգացումները¹¹, գտել է, որ այն դեպքում, երբ տեղեկություն

¹¹ Stu Tarsasag a Szabadsagjogokert v. Hungary գործով 14 ապրիլի 2009թ. վճիռը, կետ 35

տրամադրելու պահանջը վերաբերում է հանրային իշխանության մարմնի, ինչպես նաև վերջինիս հիմնադրած կազմակերպությունների տնօրինության ներքո գտնվող որևէ փաստաթղթի, տեղեկություն ստանալու իրավունքի բովանդակությունը հանգում է հանրային իշխանության մարմինների տնօրինության ներքո գտնվող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքին, դրա իրացմանը: Այսինքն՝ այն դեպքում, երբ տեղեկություն տրամադրելու պահանջը վերաբերում է հանրային իշխանության մարմնի, ինչպես նաև վերջինիս հիմնադրած կազմակերպությունների տնօրինության ներքո գտնվող որևէ փաստաթղթի, տեղեկություն ստանալու իրավունքի բովանդակությունը հանգում է հանրային իշխանության մարմինների տնօրինության ներքո գտնվող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքին:

Համադրելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ 2002թ. փետրվարի 21-ի հանձնարարականում բացահայտված «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը, և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանվող «տեղեկություն» եզրույթի բովանդակությունը, Վարչական դատարանն, անհասկանալի կերպով եկել է այն եզրահանգմանը, որ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2014թ. նոյեմբերին ՀՀ արդարադատության խորհրդի կողմից անցկացված որակավորման ստուգման գրավոր փուլի քննական տարբերակները չեն հավաստում իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ, հանգամանք, իրադարձություն, եղելություն, երևույթ, բացի ինքնին այդ քննական տարբերակների գոյությունը հավաստող փաստից: Ուստի, հայցվող քննական տարբերակները չեն հանդիսանում պաշտոնական փաստաթղթեր, հետևաբար նաև՝ տեղեկություն՝ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքի իմաստով, հետևաբար նաև՝ տեղեկություն ստանալու սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի իմաստով: Հետևաբար, հայցվող քննական տարբերակները չեն կարող պահանջվել տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքի համատեքստում՝ որպես այդ իրավունքի իրացման դրսևորում:

Բացի վերոնշյալ իրավական դրույթից Վարչական դատարանը խախտում է նաև ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 27-րդ, 27.1-րդ հոդվածները (2005թ. խմբագրությամբ) իսկ 06.12.2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 42-րդ, 51-րդ հոդվածները, ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը, Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը:

2016թ. հունվարի 26-ին ԻԵՄ-ը դիմել է վերաքննիչ վարչական դատարան՝ պահանջելով բեկանել վարչական դատարանի վճիռը և կայացնել նոր դատական ակտ՝ բավարարելով հայցը: Վերաքննիչ վարչական դատարանը 2016թ. մայիսի 26-ին հրապարակել է իր որոշումը, որով ԻԵՄ-ի բողոքը մերժվել է:

7.2. «Իրավունքի Եվրոպա միավորումն» ընդդեմ Արդատադատության խորհրդի. վարչական գործ թիվ ՎԴ/0630/05/15

2015թ. հունվարի 19-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ արդարադատության խորհուրդ՝ խնդրելով տրամադրել ՀՀ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2014 թ. -ի նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման ստուգման քննության գրավոր փուլի

մասնակիցների կողմից գրված թեստերի ստուգված տարբերակները: 2015թ. փետրվարի 2-ին ստացվել է հարցման պատասխանը, որով մերժվել է տեղեկություններ տրամադրելու մեր խնդրանքը: Պատասխանի մեջ հղում է արվել ՀՀ դատական օրենսգրքի մի շարք հոդվածների, մասնավորապես՝

- 115.1-րդ հոդվածի 4-րդ մասին, որի համաձայն՝ «Հավակնորդն իրավունք ունի ստանալու /.../ սույն օրենսգրքի 115.2-րդ հոդվածով նախատեսված գրավոր քննության ստուգված ցանկացած աշխատանքի պատճենները՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»:
- 155.1-րդ հոդվածի 5-րդ մասին, որի համաձայն՝ «ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը և արդարադատության նախարարը կարող են ցանկացած ժամանակ դիմել և եռօրյա ժամկետում ստանալ /.../ գրավոր քննության ստուգված աշխատանքների պատճենները»:
- 115.3-րդ հոդվածի 21-րդ մասին, ըստ որի՝ «Արդյունքների հրապարակումից հետո հավակնորդի պահանջով անհապաղ, բայց ոչ ուշ, քան մինչև դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող օրը, տրամադրվում է իր գնահատված գրավոր աշխատանքի պատճենը /.../»:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ արդարադատության խորհուրդը նշել է, որ օրենսդիրը սպառիչ սահմանել է այն սուբյեկտների շրջանակը, որոնք կարող են դիմել և ստանալ գրավոր քննության ստուգված աշխատանքների պատճենները, և հանգել եզրակացության, որ հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել ԻԵՄ-ին:

2015թ. մարտի 3-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ արդարադատության խորհրդին տրամադրել 2015թ. հունվարի 19-ի հարցմամբ հայցված տեղեկատվությունը:

2016թ. մարտի 23-ին Վարչական դատարանն ամբողջությամբ մերժել է ԻԵՄ-ի հայցադիմումը՝ ըստ էության կիրառելով լրիվ նույն մոտեցումն, ինչ կիրառվել է թիվ ՎԴ/0787/05/15 «Իրավունքի Եվրոպա միավորում իիկ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության ակադեմիայի» վարչական գործով: Այդ դեպքում նույնպես, Վարչական դատարանը, վերլուծելով, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ 2002թ. փետրվարի 21-ի հանձնարարականում սահմանված «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը, ինչպես նաև՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված «տեղեկություն» եզրույթի բովանդակությունը, եզրակացրել է, որ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2014թ. նոյեմբերին ՀՀ արդարադատության խորհրդի կողմից անցկացված որակավորման ստուգման գրավոր փուլի մասնակիցների ստուգված աշխատանքները չեն հավաստում իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ, հանգամանք, իրադարձություն, եղելություն, երևույթ, բացի ինքնին այդ քննական տարբերակների գոյությունը հավաստող փաստից: Ուստի, հայցվող քննական տարբերակները չեն հանդիսանում պաշտոնական փաստաթղթեր, հետևաբար նաև՝ տեղեկություն՝ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքի իմաստով, հետևաբար նաև՝ տեղեկություն ստանալու սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի իմաստով:

Հետևաբար, հայցվող քննական տարբերակները չեն կարող պահանջվել տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքի համատեքստում՝ որպես այդ իրավունքի իրացման դրսևորում:

Եթե հաշվի առնենք Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ 2002թ. փետրվարի 21-ի հանձնարարականում սահմանված «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը, ապա միանշանակ կարելի է պնդել, որ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2014 թ. նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման ստուգման քննության գրավոր փուլի մասնակիցների կողմից գրված աշխատանքների ստուգված տարբերակները հանդիսանում են պաշտոնական փաստաթղթեր, քանի որ դրանք կազմված են հանրային իշխանության մարմնի՝ Արդարադատության խորհրդի կողմից, հավակնորդների գրավոր աշխատանքները և դրանց ստուգված տարբերակները ոչ այլ ինչ են, քան անհատական գնահատականների հիմքում ընկած փաստ, և դրանով է պայմանավորված հավակնորդի մրցույթում հաղթելու իրավական հետևանքը: Նշվածից կարելի է եզրակացնել, որ 2014 թ. նոյեմբերի 1-ին անցկացված որակավորման ստուգման քննության գրավոր փուլի մասնակիցների կողմից գրված աշխատանքների ստուգված տարբերակները հանդիսանում են տեղեկություններ՝ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքի իմաստով, քանի որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանությանն առնչվող պրակտիկայի վերջին զարգացումները հանգում են նրան, որ այն դեպքում, երբ տեղեկություն տրամադրելու պահանջը վերաբերում է հանրային իշխանության մարմնի, ինչպես նաև վերջինիս հիմնադրած կազմակերպությունների տնօրինության ներքո գտնվող որևէ փաստաթղթի, տեղեկություն ստանալու իրավունքի բովանդակությունը հանգում է հանրային իշխանության մարմնի ներքին տնօրինության ներքո գտնվող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքին, դրա իրացմանը:

Այսպիսով՝ ՀՀ վարչական դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 27-րդ, 27.1-րդ հոդվածները (2005թ. խմբագրությամբ), իսկ 06.12.2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 42-րդ, 51-րդ հոդվածները, ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը, Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը:

2016թ. մայիսի 2-ին ԻԵՄ-ը դիմել է վերաքննիչ վարչական դատարան՝ պահանջելով բեկանել վարչական դատարանի 2016թ. մարտի 23-ի վճիռը և կայացնել նոր դատական ակտ՝ բավարարելով հայցը:

7.3. «Իրավունքի Եվրոպա միավորումն» ընդդեմ Արդարադատության խորհրդի. վարչական գործ թիվ ՎԴ/0774/05/15

2015թ. հունվարի 27-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ արդարադատության խորհուրդ՝ խնդրելով տրամադրել ՀՀ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2014 թ. -ի դեկտեմբերի 10-12-ին և 2015 թ. -ի հունվարի 26-ին անցկացված որակավորման ստուգման քննության բանավոր փուլի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ՝ ՀՀ արդարադատության խորհրդի անդամների եզրակացությունը և հատուկ կարծիքները: ԻԵՄ-ը նաև խնդրել է մանրամասնել, թե ինչ չափանիշներով է իրականացվում մասնակիցների գնահատումը այս փուլում և տրամադրել հարցազրույցի փուլի բոլոր մասնակիցների հարցաշարերը,

հոգեբանական թեստերն ու դրանց արդյունքները, հարցազրույցների գնահատականները՝ ըստ Արդարադատության խորհրդի առանձին անդամների, ինչպես նաև մնացած բոլոր մրցութային փաստաթղթերը:

2015թ. փետրվարի 11-ին ստացվել է ՀՀ արդարադատության խորհրդի պատասխանը, որում հղում է արվում ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասին, որի համաձայն. «Հոգեբանական թեստի արդյունքներն ունեն միայն խորհրդատվական նշանակություն, ենթակա չեն հրապարակման և տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին՝ խորհրում հարցազրույցի անցկացումից հետո մինչև ամփոփիչ քննարկումը: Հոգեբանական թեստի արդյունքները, դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա են ոչնչացման»:

Հղում է արվել նաև ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասին, որի համաձայն՝ «Արդարադատության խորհրդում հարցազրույցին մասնակցած անձինք իրավունք ունեն դիմելու և Արդարադատության խորհրդում քվեարկության արդյունքների ամփոփումից հետո մեկշաբաթյա ժամկետում, ստանալու սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան իրենց վերաբերյալ կազմված զեկույցը»:

Հղում է արվել նույն հոդվածի 7-րդ մասին, ըստ որի. «Դատավորների թեկնածությունների ցուցակի հետ Հանրապետության Նախագահին են ուղարկվում հարցազրույցին մասնակցած բոլոր հավակնորդների անձնական գործերը և նրանց վերաբերյալ սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան կազմված զեկույցները՝ Արդարադատության խորհրդի անդամների ներկայացրած հատուկ կարծիքների հետ»:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ արդարադատության խորհուրդը հաշվի է առել այն հանգամանքը, որ հոգեբանական թեստի արդյունքները տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին, իսկ հարցազրույցին մասնակցած յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ կազմված զեկույցը՝ ՀՀ դատական օրենսգրքով սահմանված սուբյեկտներին, և եզրակացրել, որ ԻԵՄ-ի կողմից հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել:

Արդարադատության խորհուրդը նշել է, որ ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով՝ հարցազրույցին մասնակցած յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ կազմված զեկույցում մանրամասն ներկայացրել է այն հանգամանքները, որոնք պայմանավորել են հավակնորդի ընտրությունը կամ նրա ընտրությունը մերժելու պատճառները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ԻԵՄ-ի կողմից հայցվող տեղեկատվությունը, այն է՝ «հարցազրույցների գնահատականները՝ ըստ Արդարադատության խորհրդի առանձին անդամների» շարադրված կազմված զեկույցներում՝ Արդարադատության խորհուրդը ևս մեկ

անգամ նշել է, որ դրանց կարող են ծանոթանալ միայն ՀՀ դատական օրենսգրքով սահմանված սուբյեկտները, հետևաբար՝ դրանք չեն կարող տրամադրվել ԻԵՄ-ին: Կից ներկայացվել է միայն ՀՀ արդարադատության խորհրդի անդամների կողմից թիվ ԱԽ-29 Ո-27 որոշման վերաբերյալ հատուկ կարծիքի պատճենը:

2015թ. մարտի 11-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով վերջինիս պարտավորեցնել Արդարադատության խորհրդին տրամադրել ՀՀ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2014 թ. դեկտեմբերի 10-12-ին և 2015 թ. հունվարի 26-ին անցկացված որակավորման ստուգման քննության բանավոր փուլի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ՝ ՀՀ արդարադատության խորհրդի անդամների եզրակացությունը և հատուկ կարծիքները, հարցազրույցի փուլի բոլոր մասնակիցների հարցաշարերը, հոգեբանական թեստերն ու դրանց արդյունքները, հարցազրույցների գնահատականները՝ ըստ արդարադատության խորհրդի առանձին անդամների, ինչպես նաև մնացած բոլոր մրցութային փաստաթղթերը:

2015թ. հոկտեմբերի 19-ին Վարչական դատարանն ամբողջությամբ մերժել է ԻԵՄ-ի հայցը՝ հղում կատարելով ՀՀ դատական օրենսգրքի 115.1-րդ հոդվածի 3-րդ մասին և 117-րդ հոդվածի 4-րդ մասին և համարելով, որ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելը անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ արդարադատության խորհրդի անդամների և հարցազրույցների մասնակիցների անձնական կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու իրավաչափ նպատակի համար: Դատարանն իր վճռում անձնական կյանքի և տեղեկատվության ազատության մասին իրավունքների միջև արդարացի հավասարակշռության չափանիշ է համարել այն հանգամանքը, թե արդյո՞ք տվյալ տեղեկատվությունը աջակցում/նպաստում է հանրային նշանակության հարցի շուրջ բանավեճին, և այս համատեքստում առանձնացրել է ՀՀ դատական օրենսգրքով ամրագրված ՀՀ արդարադատության խորհրդի անդամների հատուկ կարծիքի ինստիտուտը, որը հրապարակային է: Մյուս կողմից՝ դատարանը նշել է նաև, որ որևէ այլ կերպ, քան խնդրո առարկա տեղեկատվությունը չտրամադրելն է, հնարավոր չէ ապահովել քվեարկության գաղտնիությունը, հետևաբար նաև՝ գործընթացում ներգրավված անձանց՝ անձնական տվյալների պաշտպանությունը: Ուշագրավն ու հակասականն այն է, որ ԻԵՄ-ին հունվարի 27-ի հարցմանն ի պատասխան տրամադրված հատուկ կարծիքում երևում է ՀՀ նախագահի հաստատմանը ներկայացված՝ քաղաքացիական գործեր քննող դատավորների ցուցակում ընդգրկված երեք հավակնորդներից յուրաքանչյուրի, ինչպես նաև ցուցակում չընդգրկված հավակնորդներից մեկի օգտին արդարադատության խորհրդի անդամների կողմից տրված դեմ և կողմ ձայների քանակը: Փաստորեն, այսպիսով հրապարակվել է այն տեղեկատվությունը, որն ըստ արդարադատության խորհրդի՝ տրամադրման ենթակա չէ, վարվում է փակ ընթացակարգով, իսկ ըստ դատարանի՝ խախտում է թեկնածուների ու քվեարկողների անձնական կյանքի գաղտնիության իրավունքը: Դատարանն իր վճռում չի անդրադարձել այս էական հակասությանը:

Անդրադառնալով հարցազրույցի փուլի բոլոր մասնակիցների հարցաշարերը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջին՝ դատարանը, ինչպես և ԻԵՄ-ի ներկայացրած մյուս երկու հայցերի հիման վրա հարուցված վարչական գործերում (ՎԴ/0787/05/15 և ՎԴ/0630/05/15), վերլուծելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2002թ. փետրվարի 21-ի հանձնարարականում սահմանված «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը, ինչպես նաև՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը՝ հանգել է

եզրակացության, որ պաշտոնական փաստաթուղթ է հանդիսանում հանրային իշխանության մարմինների տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը՝ զետեղված զանկացած նյութական կրիչի վրա, որով, ի թիվս այլնի, հավաստվում է իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ, հանգամանք, իրադարձություն, եղելություն, երևույթ: Մինչդեռ, տվյալ դեպքում հայցվող հարցաշարը չի հավաստում իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ, հանգամանք, իրադարձություն, եղելություն, երևույթ, բացի հարցաշարի առկայությունը հավաստող փաստից: Այս անհիմն եզրակացության հիման վրա էլ դատարանը գտել է, որ խնդրո առարկա հարցաշարերը չեն հանդիսանում պաշտոնական փաստաթղթեր, հետևաբար նաև՝ տեղեկատվություն՝ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքի իմաստով, որպիսին տվյալ դեպքում կազմում է տեղեկատվություն ստանալու իրավունքի բովանդակությունը: Հետևաբար, հարցաշարերը չեն կարող պահանջվել տեղեկատվություն փնտրելու և ստանալու իրավունքի համատեքստում՝ որպես այդ իրավունքի իրացման դրսևորում:

Հոգեբանական թեստերն ու դրանց արդյունքները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի առնչությամբ դատարանը, հղում կատարելով ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասին, նշել է , որ հոգեբանական թեստի արդյունքներն ունեն միայն խորհրդատվական նշանակություն, ենթակա չեն հրապարակման և տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին՝ խորհրդում հարցազրույցի անցկացումից հետո մինչև ամփոփիչ քննարկումը: Հոգեբանական թեստի արդյունքները, դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո, ենթակա են ոչնչացման: Դատարանն արձանագրել է, որ ՀՀ դատական օրենսգրքի նշված պահանջին համապատասխան՝ հայցվող հոգեբանական թեստերը ոչնչացված են, որպիսի փաստը դատարանը հաստատված է համարել 16.02.2015թ. Փաստաթղթերի ոչնչացման ակտի հիման վրա:

Դատարանը, քննելով գործի մանրամասները, հանգել է եզրակացության, որ հայցվող տեղեկատվությունը չտրամադրելն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Այնինչ պահանջվող տեղեկատվության մերժումը կարևոր է խոսքի ազատության տեսանկյունից. Կոնվենցիայով խոսքի ազատության իրավունքը ներառում է նաև տեղեկություններ և գաղափարներ ստանալու, տարածելու ազատությունը (ՀՀ Սահմանադրությամբ՝ նաև փնտրելու): Այս իրավունքները կարող են սահմանափակվել, եթե սահմանափակումը նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ «ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով» (Կոնվենցիայի 10-րդ հոդված, 2-րդ մաս), «պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների ու ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար» (ՀՀ Սահմանադրություն, 43-րդ հոդված, 2005թ խմբագրությամբ):

Կարևոր է նաև ՄԻԵԴ-ի պրակտիկան արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափությունը գնահատելիս. վերջինս կիրառում է եռաստիճան թեստ՝ տեսնելու, թե արդյոք նշված միջամտությունը սահմանված է օրենքով, հետապնդում է իրավաչափ նպատակ և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: Ընդ որում՝ ՄԻԵԴ-ը սահմանել է, որ թեստի երրորդ աստիճանը գնահատելիս դատարանը պետք է մտապահի, որ «անհրաժեշտը» հաճախ ավելին է, քան «օգտակարը», «ողջամիտը» կամ «ցանկալին», և որ այն պետք է բխի ճնշող հասարակական կարիքից, լինի համաչափ հետապնդող իրավաչափ նպատակին, և սահմանափակման անհրաժեշտությունը պետք է հիմնավորվի համոզիչ փաստերով: Ըստ ԻԵՄ-ի՝ այս միջամտությունը չի համապատասխանում թեստի երեք կետերից երկուսին: Մասնավորապես, ժողովրդավարական հասարակությունում այս միջամտության անհրաժեշտ չլինելու մասով հարկ է նշել, որ դատավորների թեկնածուների ընտրության նման կարևոր և հանրային նշանակության գործընթացում պահանջվող տեղեկատվության հրապարակայնությունն է բխում ճնշող հասարակական կարիքից, այլ ոչ թե թեկնածուների իրենց վերաբերող տեղեկությունների գաղտնիությունն ապահովելը:

Այսպիսով՝ Վարչական դատարանը խախտել է վիճարկվող որոշման պահին գործող ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18, 19, 27, 42, 43-րդ, 83.5-րդ հոդվածները (2005թ. խմբագրությամբ), իսկ 06.12.2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 42-րդ, 51-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 10, հոդվածները, տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

2015թ. նոյեմբերի 23-ին ԻԵՄ-ը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարանի՝ նույն թվականի հոկտեմբերի 19-ի վճռի դեմ:

2016թ. ապրիլի 27-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը հրապարակել է սույն գործով իր որոշումը, որով ամբողջությամբ մերժել է ԻԵՄ-ի վերաքննիչ բողոքը՝ համարելով այն անհիմն: Վերաքննիչ դատարանը գտել է, որ վարչական դատարանի եզրահանգումները եղել են իրավաչափ: Անդրադառնալով հայցվող տեղեկատվության տրամադրման արգելքին՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ պահանջվող տեղեկատվության մերժումը սահմանված է օրենքով, հետապնդում է իրավաչափ նպատակ և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

7.4. «Իրավունքի Եվրոպա միավորումն» ընդդեմ Արդարադատության խորհրդի. վարչական գործ թիվ ՎՂ/1169/05/15

2015թ. փետրվարի 23-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ արդարադատության խորհուրդ՝ խնդրելով տրամադրել ՀՀ արդարադատության խորհրդի 2015թ. հունվարի 26-ի «Դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման մասին» թիվ ԱԽ-2-Ո-5 որոշման պատճենը, դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2015թ. հունվարի 26-ին անցկացված որակավորման ստուգման քննության բանավոր փուլի արդյունքների վերաբերյալ ամփոփիչ քննարկման ավարտից հետո կայացված քվեարկության արդյունքները, մասնավորապես՝ թե հավակնորդներից յուրաքանչյուրը քանի կողմ և քանի դեմ ձայն է ստացել, ՀՀ արդարադատության խորհրդի անդամների հատուկ կարծիքները, եթե այդպիսիք առկա են:

2015թ. մարտի 5-ին ստացվել է ՀՀ արդարադատության խորհրդի պատասխանը, որում հղում է արվում ՀՀ դատական օրենսգրքի 115.1-րդ հոդվածի 3-րդ մասին, որի համաձայն. «Գրավոր քննության, ինչպես նաև Արդարադատության խորհրդում հարցազրույցի ողջ ընթացքը, **բացառությամբ Խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման**, տեսաձայնագրվում է Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից»:

Հղում է արվել նաև վերոնշյալ հոդվածի 6-րդ մասին, որի համաձայն՝ «Գրավոր քննությանը և Արդարադատության խորհրդում հարցազրույցին (**բացառությամբ Խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման**) կարող են ներկա լինել (...):»:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ արդարադատության խորհուրդը եզրակացրել է, որ Արդարադատության խորհրդում հարցազրույցի արդյունքների վերաբերյալ ամփոփիչ քննարկմանը և դրա ավարտից հետո անցկացվող քվեարկությունն իրականացվում են փակ ընթացակարգով, հետևաբար ԻԵՄ-ի կողմից հայցվող տեղեկատվությունը չի կարող սրամադրվել:

Միաժամանակ նշվել է, որ ՀՀ արդարադատության խորհրդի 2015թ. հունվարի 26-ի «Դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման մասին» թիվ ԱԽ-2-Ո-5 որոշման վերաբերյալ հատուկ կարծիքներ չեն ներկայացվել:

2015թ. հոկտեմբերի 19-ին Վարչական դատարանը հրապարակել է իր վճիռը, որի համաձայն՝ ԻԵՄ-ի հայցը մերժվել է: Դատարանը նույնությամբ կրկնել է «Իրավունքի Եվրոպա միավորում ի հիկ-ն ընդդեմ Արդարադատության խորհրդի» թիվ ՎԴ/0774/05/15 վարչական գործով վճիռը՝ բերելով նույնական հիմնավորումներ:

Այսպիսով՝ Վարչական դատարանը, այս դեպքում նույնպես, խախտել է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18, 19, 27, 42, 43-րդ, 83.5-րդ հոդվածները (2005թ. խմբագրությամբ), իսկ 06.12.2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 42-րդ, 51-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 10-րդ, 18-րդ, հոդվածները, տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը: 2015թ. նոյեմբերի 23-ին ԻԵՄ-ը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարանի՝ նույն թվականի հոկտեմբերի 19-ի վճռի դեմ՝ խնդրելով ամբողջությամբ բեկանել վարչական դատարանի կայացված դատական ակտը:

2016թ. ապրիլի 27-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը հրապարակել է սույն գործով իր որոշումը, որով ամբողջությամբ մերժել է ԻԵՄ-ի վերաքննիչ բողոքը՝ այն համարելով անհիմն:

8. Առաջարկություններ ՀՀ դատական օրենսգրքի վերաբերյալ.

- 8.1. ՀՀ դատական օրենսգրքի 115.3-րդ հոդվածի՝ քննության և բողոքարկան հանձնաժողովների մասով կարգավորումները, կարծում ենք, չեն նպաստում գործընթացի առավելագույն արդյունավետությանն ու օբյեկտիվությանը: Ուստի կարծում ենք, որ հիշյալ կարգավորումը պետք է վերանայվի և սահմանվի քննության հանձնաժողովի բոլոր անդամների համար պարտականություն ստուգելու և գնահատելու հավակնորդների աշխատանքները: Անհրաժեշտ է ապահովել նաև քաղաքացիական հասարակության անկախ ներկայացուցիչների մասնակցությունը այդ հանձնաժողովների աշխատանքներում, քանի որ արդարադատության նախարարի կողմից ներկայումս իրավաբան գիտնականների նշանակումը բավարար չէ դրանք ներկայացուցչական համարելու համար:
- 8.2. ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդված 2-րդ մաս. Արդարադատության խորհրդում քվեարկության արդյունքներով կազմվում է թեկնածությունների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի թափուր տեղերի թվաքանակին հավասար թվաքանակի առավելագույն ձայներ ստացած թեկնածությունների ցուցակ: Ձայների հավասարության դեպքում նախապատվություն է տրվում այն հավակնորդին, որը որակավորման գրավոր քննության արդյունքներով ունի առավել բարձր հանրագումարային միավորներ: Եթե արդյունքում առկա են հավասար միավորներ ունեցող անձինք, ապա բոլոր նշված անձինք ընդգրկվում են ցուցակում: Վերոգրյալ կարգավորումը ևս խնդրահարույց է և անհրաժեշտ է սահմանել կոնկրետ շեմ որը հաղթահարելու դեպքում հավակնորդը կընդգրկվի թեկնածուների ցուցակում:
- 8.3. Առաջարկում ենք վերանայել նաև մրցութային բոլոր փաստաթղթերի, այդ թվում՝ նաև հոգեբանական թեստերի մատչելիության վերաբերյալ սահմանափակումները: